20163

372 Ն. Ցուզա
Ն-93

1912

2010

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԵՒ

Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

1911-1912 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

370
2453-ՏԵ

1912

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԱՑ

ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
370
Ձ453-ՏԵ

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԵՒ

Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

1911-1912 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ ՄԱՍԻ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Կարդացուած 1912 թ. յունիս 17-ին
Կենտր. դպրոցի դահլիճում
Դպրոցական Ակտին։

8296

Յարգելի հանդիսականներ,

Վստահելով Ձեր բարեհաճ ուշադրութեանն ու բարեացակամ համբերատարութեանը և համոզուած լինելով, որ ազգ. դպրոցների վիճակին ծանօթանալու անկեղծ փափագն է մղել Ձեզ՝ ներկայ լինել դպրոցական ակտի սոյն հանդէսին՝ քաղցր պարտականութիւն եմ համարում ինձ համար՝ որոշակի և կոնկրետ կերպով ցուցադրել Ձեր առջև Գ. Թանանեան, Ս. Կատարինեան և Կենտրոնական ազգ. դպրոցների ներկայ 1911—1912 ուսումնական տարեշրջանի կրթական-ուսումնական վիճակի ու յառաջադիմութեան պատկերը՝ ընդհանուր գծերով։

Ճշմարտութիւններ կան, որ կրկնւում են ամեն օր և ընդունելի են շատ շատերի համար— օրէնքներ, սկզբունքներ, որ մտնում են շատ ազգերի ու բազմաթիւ անհատների բարոյական կոդէքսի մէջ։ Այդպիսի ակնյայտնի ճշմարտութիւններից մէկն էլ այն է, որ ժողովրդի կեանքի պայմանների բարելաւումը սերտ կերպով կապուած է նրա քաղաքակրթական յառաջադիմութեան և դպրոցական գործի բարգաւաճման հետ։—Ի՞նչ տենդային աշխատանք է կատարւում ամենուրեք, ինչ էական ու սկզբունքային փոփոխութիւններ են կատարւում դպրոցական գործի բարելաւման և դաստիարակութեան, ուսուցման սիստեմների ու եղանակների բարեկարգութեան գործում։ Դպրոցական գործը սկսել է իւր նախկին քարացած, դոգմատիկ վիճակից ելնել. լուսաւոր ու գրաւիչ հորիզոններ են բացուած Նոր դպրոցի հմայիչ գործունէութեան առջև։ Ամենուրեք ծրագրային էական փոփոխութիւններ, վարչական բարեկարգում, դաստիարակչական միջոցների լաւագոյն սիստեմների մշակում և այլն:

Որևէ գործ, որևէ հաստատութիւն, եթէ դատապարտւում է անշարժութեան, իր մէջ անխուսափելիօրէն սկսում է աճեցնել իրան այլասերող ու քայքայող թոյնը։ Այդպիսի հաստատութիւնն անխուսափելիօրէն պիտի կմախքանայ ու այլասերուի։ Այդ կարգի հաստատութիւններն ու գործերը վերջապէս պիտի ունենան իրանց գահավէժ անկումը։ Դպրոցը հաստատութիւնների մէջ թերևս առաջինն է, որ անվերջ կատարելագործման ու զարգացման իդէալին անշեղ պիտի հետևէ։

Ուսումնարանական գործի մէջ սա եղել է մեր ղեկավարող

սկզբունքը և պիտի շարունակէ լինել։ Թող հասարակութիւնն ինքը դատէ՝ թէ ինչ է արուած այդ ուղղութեամբ և կայ արդեօք դրանում գնահատութեան արժանի մաս, թէ ոչ։

Մեզ անծանօթ չեն այն բարեկարգումները, որ կատարւում են դպրոցական գործի մէջ լուսաւոր երկրներում։ Առողջ սկզբունքներով առաջնորդուող պրակտիկայի հրահանգներն անհամար են։— Որքան էլ ուզենայինք՝ սակայն միջավայրի ընդհանուր կուլտուրական և մասնաւորապէս տեղական աննպաստ պայմանները չէին կարող թոյլ տալ՝ ցանկալի փայլն ու թռիչքը տալ դպրոցների սրբազան գործին։

Ամեն ինչ արմատախիլ անելու և ամեն ինչ նորից, սկզբից սկսելու սկզբունքը ղեկավարող չէ եղել մեզ համար։ Դպրոցական գործի մէջ մենք հիմնական ու աստիճանական բարեկարգումների կուսակից ենք եղել՝ առաջնորդուելով մանկավարժական արդի առողջ սկզբունքներով և տեղիս հասարակական, ընտանեկան և այլ պայմանների պարզորոշ ըմբռնումով։ Սակայն մենք երբէք անզօր պալլիատիւների էլ կուսակից չենք եղել. ամեն մի քայլ, ամեն բարեկարգում թող լինի մասնաւոր՝ բայց անպայման հիմնական։ Չենք քաշւում ճշմարտութիւնը խոստովանելու՝ բոլոր այն միջոցներն ու քայլերը, որոնք պալլիատիվի բնոյթ են ունեցել, տուել են շատ չնչին և երբեմն նոյնիսկ ոչ մի հետեւանք։ Փաստեր շատ կան. բայց հիմա մասնաւոր եղելութիւնները չէ, որ մեր ուշքը պիտի գրաւեն։

Անառագաստ ու անղեկ նաւը դատապարտուած է շուտափոյթ խորտակման—անսկզբունք դպրոցը՝ անխուսափելի այլասերման։ Թերևս աւելի կուռ և հուժկու են ճիզուիտական ինտերնատները իրանց սպանիչ, սակայն որոշակի սահմանուած դոգմերով, սկզբունքներով, քան շատ աշխարհիկ, պետական և ուրիշ դպրոցներ, որոնց մէջ ուսուցումն ու դաստիարակութիւնը զանազան, յաճախ նոյնիսկ հակառակ սկզբունքներից բղխող քայլերի ու միջոցների անմիտ կոմպլիկացիա են, մի անկարգ շեղջակոյտ։

Թերևս պարադոքսալ թուայ մեր կարծիքը, սակայն պէտք է ի նկատի ունենալ, որ մենք դպրոցների տուած արդիւնքի մասին չենք խօսում, այլ նրանց ամբողջական գոյութեան պայմանների մասին։

Ահա մեր ղեկավարող սկզբունքը, որ մենք դրել ենք սոյն ուսումնական տարում կազմած դպրոցական ներքին կանոնադրութեան ճակատին։



«Նոր-Ջուղայի Կենտրոնական, Գ.-Ցանանեան և Ս. Կատարինեան ազգ. դպրոցների նպատակն է դաստիարակել ու կրթել հայ անհատների զաւակներին՝ նպաստելով նրանց մտքի, զգացումների ու կամքի ներդաշնակ զարգացմանը, նոցա մէջ բարոյական բնաւորութիւն ստեղծելուն և նոցա ֆիզիքական կրթութեան յառաջադիմութեանը՝ պատրաստելու համար առաքինի մարդիկ, ազգի ու եկեղեցու հաւատարիմ որդիներ, ժողովրդի անկեղծ բարեկամներ՝ յառաջադիմելու և կատարելագործուելու ձգտումներով օժտուած»։

Ահա մեր դպրոցների նպատակը, ահա մեր հիմնական ու ղեկավարող սկզբունքը։

Այս սկզբունքը անհրաժեշտաբար պարզ և ըմբռնելի պիտի լինի նաև ընտանիքի համար։ Շատ անգամ ենք խօսել դպրոցի ու ընտանիքի սերտ գործակցութեան ու համերաշխ ընթացքի մասին։ Կրկնութիւն անելն աւելորդ է։ Դուք, յարգելի ծնողներ, ազնիւ տիկիններ ու մեծարգոյ պարոններ, պիտի քաջ գիտենաք, որ միջնակարգ դպրոցի նպատակը մասնագէտներ պատրաստելը չէ. դպրոցի անմիջական նպատակը չէ գրագիրներ պատրաստել՝ դիւանատներում աշխատելու, կամ լեզուագէտներ՝ թարգմանի պաշտօն կատարելու համար. միջնակարգ դպրոցը չէ ձգտում պատրաստել ոչ արհեստաւորներ, ոչ երաժիշտներ, ոչ Հնդկաստանի «ճէկերին» ձգտող ու դրա համար ոդիսական համբորդութիւն ձեռնարկող շահաւէրներ, ոչ դերձակուհիներ, ոչ սալոնի տիկիններ, և ոչ այլ մասնագէտներ,— դպրոցի հիմնական ու անմիջական նպատակն է՝ պատրաստել բարոյական բնաւորութեամբ մարդիկ, որոնք հասկանան իրանց կոչումը, ունենան պէտք եղած գիտելիքները՝ յառաջադիմելու համար կեանքի ամեն ասպարիզում, ուր իրանց կը վիճակուի գործել—մարդիկ, որ ունենան կիրթ ու ազնիւ զգացումներ, ունենան աննկուն եռանդ ու ամուր կամք։ Այդ նպատակով է, որ ազգ. դպրոցների ծրագրում տեղ են բռնում բազմապիսի առարկաներ՝ լեզուներ, պատմութիւն, գիտութիւններ,— և՛ մանկավարժութիւն, և՛ հաշուապահութիւն, և՛ Անգլիայի պատմութիւն եայլն եայլն։

Միջնակարգ դպրոցի նեղ ու մասնագիտական բնոյթը պէտք է համարել վնասակար ու վտանգաւոր՝ սաների դաստիարակութեան գործի տեսակէտից։ Միակողմանի ձգտման իւրաքանչիւր քայլ դպրոցներիս Մանկավ. Խորհրդի կողմից միշտ հանդիպել է յամառ դիմադրութեան։

Եթէ մեր սկզբունքներն ու մեր քայլերը իրանց բովանդակութեամբ լիովին պարզորոշ չեն եղել, սակայն իրանց մասերով գոնէ յայտնի են եղել Ջուղայի արգոյ հայ հասարակութեան։ Սոյն տարում հասարակութեան վերաբերումը դէպի դպրոցները ընդհանրապէս եղել է ուշադիր ու սրտագին. յաճախ լսել ենք գոհունակութեան արտայայտութիւններ շատ ծնողներից՝ անկախ նրանց դիրքից ու զբաղումից, յարաբերութիւններից ու կապերից։ Թերևս այդ սրտագին վերաբերմունքի հետևանքն է եղել այն, որ այս տարի շուրջ 175 նորեկ աշակերտ-աշակերտուհիներ են արձանագրուել մեր դպրոցների սաների շարքում. նրանց մի մասը եկել է օտար դպրոցներից, մի մասն էլ անցեալ տարուայ հեռացածներն են, որ կրկին վերադարձել են։

Դպրոցներիս ընդհանուր կարգն և ուղղութիւնը նոյնն է եղել, ինչ որ անցեալ տարի էր. մեր հիմնական սկզբունքները, գործելու հիմնական եղանակները չեն փոխուել, և մանաւանդ մենք երբէք յետս չենք ընկրկել։ Ուրախ ենք, որ շատերն իրանց սխալն ուղղելու ազնիւ կամքն ունեցան։

Թէպէտև այս տարի անցեալ տարուայ համեմատութեամբ՝ դպրոցները աւելի բարեյաջող պայմանների մէջ են դրուած եղել, այնուամենայնիւ դպրոցներիս յառաջադիմութեան համար պակաս չեն եղել խոչընդոտներ ու արգելքներ՝ թէ յայտնի, և թէ վարագուրուած։ Սակայն դպրոցներիս Ուսումնական Վարչութիւնը կարողացել է ամեն կարգի արգելքների դէմ մաքառելով իւր նպատակների ու ձգտումների մեծագոյն մասն ի կատար ածել։

Արդ տեսնենք տուեալ պայմանների մէջ ինչ է կատարուած և ինչ պատկեր ունին դպրոցներն՝ ընդհանուր գծերով վերցրած։

## Ա. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—ՎԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Ինչպէս գիտէք, դպրոցներիս Ուսումնական Վարչութեան, Մանկավարժական Խորհուրդի խնամքին յանձնուած է մէկ մանկապարտէզ և երեք դպրոցներ՝ Գ. Քանանեան մանկապարտէզն և Գ. Քանանեան, Ս. Կատարինեան ու Կենտրոնական ազգային երկսեռ դպրոցներն։ Մանկապարտէզը առաջին կիսամեակում ունեցել է 2 բաժանմունք,



իսկ երկրորդ կիսամեակում՝ սաների բազմանալու պատճառով՝ Ա բաժանմունքն ունեցել է իւր զուգընթացը։— Գ. Քանանեան դպրոցն ունեցել է 3 բաժանմունք և մէկ դասարան (Ա., Բ, Գ բաժ. և Ա. դաս.), որոնցից իւրաքանչիւրն ունեցել է իւր զուգընթացը. այսպիսով Գ. Քան. դպրոցի դասարանների ընդհանուր թիւն եղել է 8, իսկ մանկապարտէզի երեք բաժանմունքներ էլ հաշուելով՝ ընդամենը 11 դասարան, որոնք ամենքը զետեղուած են եղել Գ. Քանանեան դպրոցի շէնքում։— Ս. Կատարինեան և Կենտրոնական դպրոցներն իրանց կուրսով ու դասարաններով կազմում են Գ. Քանանեան դպրոցի անմիջական շարունակութիւնը, որով մանկապարտէզն ու երեք դպրոցները թէ ուսումնական, և թէ վարչական դրութեամբ կազմում են մի օրգանական ամբողջութիւն։ Ս. Կատարինեան դպրոցն ունեցել է Բ, Գ, Դ, Ե, և Զ դասարաններ՝ թուով 5։ Կենտրոնական դպրոցն էլ՝ Բ, Գ, Դ, Ե, և Զ դասարաններ՝ թուով 5։ Այսպիսով՝ դասարանների ընդհանուր թիւը եղել է 21՝ երեք մանկապարտէզի դասարան, իսկ 18՝ դպրոցների։ Կուրսի ստորաբաժանման տեսակէտով աւելի նպատակայարմար կը լինէր Ս. Կատ. և Կենտր. դպրոցների Բ դասարանները հաշուել Գ. Քան. դպրոցի վրայ, բայց քանի որ դոքա զետեղուած չեն Գ. Քանանեան դպրոցի շէնքում, այլև այն նկատումով, որ դպրոցների դասարանական բաժանման որոշ սահման գոյութիւն չունի և քանի որ դոքա կազմում են օրգանիք մի ամբողջութիւն,—նպատակայարմար ենք համարել Բ դասարանները դասել Ս. Կատ. և Կենտր. դպրոցների դասարանների շարքում։

## ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

Այս տարի հնարաւորութիւն ունեցանք մանկապարտէզի զբաղումների ու աշխատանքների մէջ էական փոփոխու-

թիւններ ու բարելաւումներ մտցնելու։ Սրան մեծ չափով նպաստեց այն, որ այս տարի յաջողուեց ունենալ մանկապարտէզի գործը սովորած մի վարժուհի։ Մինչև այժմ մանկապարտէզը երբէք իր նպատակին ծառայած չլինելուց բացի՝ հեռու է եղել գէթ աննշան չափով իսկական մանկապարտէզի պատկեր ունենալուց։ Այս տարի երեխաների զբաղումների մէջ եղել են զգալի փոփոխութիւններ։ Մեծ տեղ է տրուել ձեռքի աշխատանքին՝ թղթերի, խաւաքարտի, կաւի, աւազի և այլն։ Լաւ եղանակին դրսում ունեցել են բակի աշխատանքներ, որի համար շինել են տրուած պէտք եղած գործիքներն ու իրերը։ Գնուած և շինել են տրուած նաև մեծ թւով խաղալիկներ՝ թէ դասարանում և թէ դուրսը խաղալու համար։ Մեծ անյարմարութիւն է ներկայացնում ընդարձակ պարտէզի չգոյութիւնը, որի պատճառով հնարաւոր չէ եղել ունենալ պարտիզպանական աշխատանքներ։ Այս հանգամանքի վրայ կրկին պարտք եմ համարում հրաւիրելու դպր. պատուարժան Հոգաբարձութեան ուշադրութիւնը։ Յոյս ունենք, որ Գ. Քան. մանկապարտէզի հիմնադիր ու բարերարուհի ազնուափայլ տիկին Վ. Քանանեանն էլ աչքաթող չի անիլ այս հանգամանքը՝ պէտք եղած միջոցներով մանկապարտէզի համար յատուկ պարտէզ ունենալու գործին նպաստելու համար։ Խիստ մեծ անյարմարութիւն է ներկայացնում մանկապարտէզի փոքրիկ երեխաների և դպրոցի համեմատաբար աւելի հասակաւոր աշակերտուհիների միասին մի բակում խաղալը՝ թէ դաստիարակչական, և թէ դիսցիպլինի նկատումներով. այս պատճառով նպատակայարմար ենք համարել Գ. Քանանեան դպրոցի բակի արևմտեան կողմի երկարաձև փոքրիկ մասը, որ կից է մանկապարտէզի դասարաններին, փոքրիկ պատով բաժանել միւս բակից, որպէսզի մանկապարտէզի սաներն հնարաւորութիւն ունենան ազատ ու առանձին խաղալու և դրսի աշխատանքներ կատարելու։ Նոր



պատրաստել տուած խաղալիքների շարքում աչքի ընկնող է եղել փայտեայ մեծ սայլը, որի պատճառած զուարճութիւնը մեծ է եղել երեխաների համար։ Ծնողները դժգոհում էին, որ սայլից սահելու պատճառով՝ երեխաների զգեստները շուտով մաշւում են. այդ անյարմարութեան առաջն առնելու համար պէտք եղածը արդէն կարգադրուած է — միւս տարի շինել կը տրուեն յատուկ նստաշորեր, որոնց վրայ նստած պիտի սահեն։ Ի դէպ, յաճախ նկատած լինելով երեխաների անսովոր հրճուանքը սայլից խմբովին սահելիս և յիշելով թէ՝ որքան աշխոյժից ու կենսունակութիւնից զուրկ է եղել մեր աշակերտութիւնը՝ աւելորդ չեմ համարում երկու խօսք ասել։ Դպրոց մտնողը շուտով կը նկատէ, թէ որքան ընկճուած, դեռ մանկական հասակից մարած ու անկեանք երեխաներ կան։ Այս ցաւալի երևոյթի բուն պատճառը տեղւոյս նիւթական, ընտանեկան ու հասարակական անբարեյաջող պայմանների մէջ պէտք է փնտրել։ Դպր. Ուսումնական Վարչութեան դաստիարակչական հոգսերից մէկն էլ այդ է եղել — ամեն կերպ՝ թէ խաղերի, թէ զբօսանքների, և թէ վերաբերմունքի միջոցով՝ երեխաներին դարձնել կենսուրախ, շարժուն ու զուարթ։ — Ոմանք ասում են՝ մանկապարտէզում «խաղ ու պար» են սովորում՝ ուզելով արտայայտել, որ այնտեղ չկան լուրջ զբաղումներ։ Մանկապարտէզի սաներից մէկի մայրը մեզ գրած նամակի մէջ գանգատւում է, որ մենք տեղւոյս ուրիշ դպրոցների վարչութեանց պէս իր երեխայի ձեռքը դեռևս Սաղմոս, Աստուածաշունչ չենք տուել, որ իր երեխան խաղի ու երգի համար չէ գալիս դպրոց և այլն։ Տեղը չէ, որ ծանրանանք այս և նման ուրիշ անհեթեթ առարկութիւնների վրայ. միայն այսքանը կասենք. այո՛, յարգելի ծնողներ, պէտք է խաղան ոչ միայն մանկապարտէզի երեխաները, այլև դպրոցների մեծ աշակերտները, այլև հասակաւորները, մի խօսքով՝ ամենքը. խաղը, ֆիզիքական մարզանքը՝ իբրև առողջութեան և կենս-

ուրախութեան աղբիւր՝ հիմք պիտի ծառայէ դաստիարակչական ազդեցութեանց համար։ Դուք տեսել, կամ լսել էք՝ գիտէք, թէ քաղաքակիրթ ազգերը որքա՜ն մեծ ու կարեւոր նշանակութիւն են տալիս խաղին, սպորտին։ Երեխաների ֆիզիքական մարզանքներն ու խաղերը իրանց կարեւոր նշանակութեան համեմատ՝ դպրոցներում սրանից յետոյ աւելի եւս լուրջ տեղ պիտի գրաւեն։

Այս տարի մանկապարտէզի սաների մեծ մասը՝ բացառութեամբ ուսումն. տարուայ վերջում ընդունուածների՝ ունեցել է համազգեստ— գոգնոց ու կարմիր զգեստ՝ սպիտակ ուսնոցով։ Ծնողների ուշադիր ու սրտագին վերաբերմունքը, ինչպէս դէպի դպրոցները, այնպէս էլ դէպի մանկապարտէզը այս և նման ուրիշ դէպքերում մեծ չափերով էր արտայայտւում՝ իրանց ցոյց տուած պատրաստակամութեամբ ու հետաքրքրութեամբ։

Այս տարի մանկապարտէզի համար վարձուել է նաեւ մի յատուկ տնտեսուհի, որի անհրաժեշտութիւնն անկասկած էր։—Մանկապարտէզի սաներն այս տարի Նոր-տարուայ երեկոյթի մէջ ունեցել են իրանց յատուկ բաժինը, ուր բոլորն էլ միակերպ ու մաքուր հագնուած՝ դրօշակներով և ուրիշ զարդերով՝ երգեցին, արտասանեցին փոքրիկ կտորներ (ժեստերով), պարեցին եւայլն՝ մեծ ուրախութիւն պատճառելով իրանց ծնողներին ու ամբողջ հասարակութեան։

Մանկապարտէզի Բ բաժանման զբաղումները ղեկավարել է օր. Կ. Յարութիւնեան, իսկ Ա. բաժանմունքինը՝ օր. Մ. Սիմէոնեան։ Ա. զուգընթացի հետ փոխնիփոխ պարապել են երկուսն էլ։

Այս տարի մանկապարտէզի համար մեծ թւով իրեղէններ ու խաղալիկներ են պատուիրուած Թիֆլիզից, բայց դժբախտաբար վաճառողի անհմտութեան պատճառով՝ այդ իրերը միայն մի քանի օր առաջ ստացուեցան։



Եղած բարեփոխութիւնները դեռ եւս քիչ պէտք է համարել. մանկապարտէզն իւր նորմալ յառաջադիմութեան համար՝ դեռ շատ պէտք ունի թէ իրեղէնների և թէ շէնքի ու կից մասերի յարմարութիւնների։

## ՈՒՍՄԱՆ ՇՐՋԱՆ

Այս տարի դպրոցներում ընդունելութիւններ սկսուել են օգոստ. 22-ից, իսկ դասերը՝ սեպտ. 1-ից. միայն մանկապարտէզի կանոնաւոր զբաղումները սկսուել են հոկտ. 10-ից՝ շնորհիւ այն հանգամանքի, որ մանկապարտէզի վարժուհին ճանապարհների խառնակութեան պատճառով ստիպուած է եղել ուշանալ։ Դպրոցներում դասերը դադարել են յունիս 10-ին, իսկ 6-րդ դասարաններում՝ մայիս 1-ին, որպէսզի այս դասարանների աշակերտ-աշակերտուհիները ազատ ժամանակ ունենային պատրաստուելու աւարտական հարցաքննութեանց համար։ Դասեր չեն եղել ջրօրհնէքի, բարեկենդանի, զատկի և միւս ընդունուած և դպրոցներիս նորակազմ «ներքին կանոնադրութեան» մէջ սահմանուած տօն օրերին։

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Այս տարի ուսուցչական կազմի մէջ կատարուել են հետեւեալ փոփոխութիւնները։ Անցեալ տարուայ ուսուցիչ-ուսուցչուհիներից օր. Հ. Զոհրաբեան, օր. Վ. Խաչիկեան, օր. Ս. Տէր-Գրիգորեան, պ. Վ. Գալստեան և պ. Մ. Վարդանեան զանազան պատճառներով թողել են դպրոցը։ Այս տարի վարձուած են հետեւեալ ուսուցիչ-ուսուցչուհիները՝ օր. Կ. Յարութիւնեան (մանկապարտիզպանուհի), օր. Ն. Զոհրաբեան և պ. Ալ. Յովհաննիսեան։

Այս տարի պաշտօնավարող բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիների թիւն է 21։ Ուսուցիչների շաբաթական դասերի միջին թիւն եղել է 25։

Այս ցուցակի համեմատ է բաշխուած եղել դասերը ուսուցիչների մէջ.

### 1. Աբգարեան պ. Ստեփան — 26 դաս.

| | |
|---|---|
| Անգլ. Բ դաս. օր. 4 | Ալգեբրա Ե դաս օր. 2 |
| » Ե » » 4 | » Զ » » 2 |
| » Զ » » 4 | Երկրաչ. Ե » » 2 |
| Աշխարհագր. Գ դաս. օր. 2 | » Զ » » 2 |
| » Դ » մ. 2 | Տոմարակալ. Զ դաս. տղ. 2 |

### 2. Աբգարեան պ. Տիգրան — 26 դաս.

| | |
|---|---|
| Բն. պատմ. Ա դաս. հ. 3 | Նկարչ. Ա դաս. հ. 3 |
| » » Բ » տղ. 3 | » Ա » գ. 3 |
| Աշխարհ. Ա » հ. 2 | » Բ » օր. 1 |
| » Ա » գ. 2 | » Բ » տղ. 2 |
| » Բ » օր. 2 | » Գ » մ. 1 |
| » Բ » տղ. 3 | Երկր. ձև. Ա » գ. 1 |

### 3. Աղանեան Տէր-Վահան քհնյ — 26 դաս.

| | |
|---|---|
| Կրօնագիտ. Գ բաժ. հ. 2 | Հայերէն Ա դաս. հ. 5 |
| » Գ » գ. 2 | » Ա » գ. 5 |
| » Ա դաս. հ. 2 | » Բ » օր. 4 |
| » Ա » գ. 2 | » Բ » տղ. 4 |

### 4. Գալստեան տ. Ծաղիկ — 23 դաս.

Ա զուգ. բաժանման բոլոր առարկաները։

### 5. Գերասիմեան պ. Արմենակ — 14 դաս.

| | |
|---|---|
| Հայերէն Զ դաս. օր. 4 | Բանահիւս. տես. Ե դաս. մ. 2 |
| Հայ. գր. պատմ. Զ » մ. 2 | Խմբերգ Ա գ.—Զ գ. 3 |
| Մանկավարժ. Զ » մ. 3 | |

### 6. Գերասիմեան տ. Նուարդ — 23 դաս.

| | |
|---|---|
| Բն. պատմ. Ա դաս. գ. 3 | Կարուձև Բ դաս. օր. 1 |
| » » Բ » օր. 3 | » Գ » » 3 |
| » » Գ » մ. 3 | » Դ » » 2 |
| » » Զ » օր. 2 | » Ե » » 4 |
| (Առտնին տնտ. փոխարէն՝ մինչև յունիս.) | » Զ » » 4 |

### 7. Դաւթեան պ. Եփրեմ — 23 դաս.

| | |
|---|---|
| Հայրենագիտ. Գ բաժ. հ. 2 | Հայերէն Գ դաս. օր. 4 |
| » Գ » գ. 2 | » Դ » » 4 |



| |
|---|
| Ֆրանսերէն Գ դաս. տղ. 3 |
| » Դ » » 3 |
| » Ե » » 3 |
| » Զ » » 2 |

### 8. Զօհրաբեան օր. Իշխանուհի — 24 դաս.

| | |
|---|---|
| Թուաբանութ. Գ բաժ. հ. 5 | Հայ. պատմ. Ա դաս. հ. 2 |
| Հայ. լեզու » » » 5 | » » Ա » գ. 2 |
| Իրագէն. » » » 2 | Ընթերց. Ա » գ. 2 |
| » » » գ. 2 | » Բ » տղ. 1 |
| Նկարչութ. Բ » հ. 2 | » Գ » օր. 1 |

### 9. Զօհրաբեան օր. Նեկտարինէ — 24 դաս.

| | |
|---|---|
| Ձեռագործ Բ բաժ. հ. 2 | Հայերէն Բ բաժ. գ. 2 |
| » Բ » գ. 2 | Ընթերց. Բ » գ. 1 |
| » Գ » մ. 2 | » Գ » հ. 1 |
| » Ա դաս, մ. 2 | Գրութ. Բ » հ. 1 |
| » Բ » օր. 2 | |
| » Գ » » 2 | |
| » Դ » » 2 | |

### 10. Կարապետեան պ. Մկրտում — 23 դաս.

| | |
|---|---|
| Անգլերէն Բ դաս. տղ. 4 | Անգլ. պատմ. Ե դաս. մ. 2. |
| » Գ » մ. 4 | Անգլ. և Հնդկ. աշխարհ. Ե գ.մ. 1 |
| » Դ » մ. 4 | |
| » Ե » տղ. 4 | |
| » Զ » » 4 | |

### 11. Կարապետեան տ. Վարդուհի — 23 դաս.

Ա հ. բաժանման բոլոր դասերը։

### 12. Կիրակոսեան Տէր-Գարեգին քհնյ — 27 դաս.

| | |
|---|---|
| Թուաբ. Ա դաս. հ. 3 | Ալգեբրա Դ դաս. մ. 3 |
| » Ա » գ. 3 | » Ե » տղ. 2 |
| » Բ » տղ. 4 | » Զ » » 2 |
| » Գ » » 3 | Երկրաչ. Ե » » 2 |
| » Դ » » 2 | » Զ » » 2 |
| » Ե » » 1 | |

### 13. Միրզա Մահմադ — 21 դաս.

| | |
|---|---|
| Պարսկերէն Գ բաժ. մ. 3 | Պարսկ. Դ դաս. տղ. 3 |
| » Ա դաս. մ. 2 | » Ե » » 3 |
| » Բ » տղ. 3 | » Զ » » 3 |
| » Գ » » 3 | |

**14. Յարութիւնեան պ. Արմենակ — 26 դաս.**

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայերէն | Գ | դաս. | տղ. | 4 | Թուաբ. | Բ | դաս. | օր. | 4 |
| » | Դ | » | » | 4 | Ֆիզիկա | Դ | » | մ. | 3 |
| Երկր. ձև. | Ա | » | հ. | 1 | » | Ե | » | մ. | 3 |
| » » | Բ | » | տղ. | 1 | » | Զ | » | մ. | 3 |
| » » | Բ | » | օր. | 1 | Քիմիա | Զ | » | մ. | 2 |

**15. Յարութիւնեան օր. Կատարինէ**

*Մանկապարտէզի Բ բաժանման բոլոր առարկաներն ու զբաղումները։*

**16. Յովհաննիսեան Տէր-Եսայի քհնյ — 18 դաս.**

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կրօնագիտ. | Բ | դաս. | օր. | 2 | Հայ. պատմ. | Բ | դաս. | տղ. | 2 |
| » | Բ | » | տղ. | 2 | » » | Բ | » | օր. | 2 |
| » | Գ | » | մ. | 2 | » » | Գ | » | մ. | 2 |
| » | Դ | » | մ. | 2 | » » | Դ | » | մ. | 2 |
| | | | | | » » | Ե | » | մ. | 2 |

**17. Յովհաննիսեան պ. Ալէքսան — 26 դաս.**

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայերէն | Ե | դաս. | օր. | 5 | Ընդհ. պատմ. | Գ | դաս. | մ. | 2 |
| » | Ե | » | տղ. | 4 | » » | Գ | » | մ. | 2 |
| » | Զ | » | » | 4 | » » | Ե | » | մ. | 2 |
| Թուաբ. | Գ | » | օր. | 3 | » » | Զ | » | մ. | 2 |
| » | Դ | » | օր. | 2 | | | | | |

**18. Յովսէփեան օր. Ովսաննա — 24 դաս.**

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայերէն | Ա | բաժ. | հ. | 6 | Իրազնն. | Բ | բաժ. | գ. | 2 |
| » | Գ | » | գ. | 5 | » | Բ | » | հ. | 2 |
| Կրօնագ. | Բ | » | հ. | 2 | Թուաբ. | Գ | » | գ. | 5 |
| » | Բ | » | գ. | 2 | | | | | |

**19. Տուքուրեան պ. Պօղոս — 26 դաս.**

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անգլերէն | Բ | բաժ. | հ. | 3 | Գեղագր. | Ա | դաս. | հ. | 1 |
| » | Բ | » | գ. | 3 | » | Ա | » | գ. | 1 |
| » | Գ | » | հ. | 5 | | | | | |
| » | Գ | » | գ. | 5 | | | | | |
| » | Ա | » | հ. | 4 | | | | | |
| » | Ա | » | գ. | 4 | | | | | |

**20. Սիմէոնեան օր. Մ.**

*Մանկապարտէզի Ա բաժանման բոլոր զբաղումներն ու առարկաները։*



**21. Վարդանեան օր. Ծովինար — 23 դաս.**

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Թուաբանութ. | Բ | բաժ. | հ. | 5 | Երգ. | Բ | բաժ. | գ. | 2 |
| » | Բ | » | գ. | 5 | » | Գ | » | գ. | 2 |
| Մարմնամ. | Բ | » | գ. | 1 | » | Բ | » | հ. | 2 |
| Գրութ. | Բ | » | հ. | 1 | » | Գ | » | գ. | 2 |
| » | Գ | » | գ. | 1 | Նկարչ. | Բ | » | գ. | 2 |

Բացի դասատուութիւնից ուսուցիչներն ունեցել են նաև հետևեալ պաշտօնները— Գ. Քանանեան դպրոցում մշտական վերակացուի պաշտօն է վարել պ. Պ. Տուքուրեան, Օր. Ս. Կատարինեան դպրոցում՝ օր. Ո. Յովսէփեան և օր. Ծ. Վարդանեան, Կենտրոնական դպրոցում՝ պ. Մ. Կարապետեան։ Դպրոցների տնտեսի պաշտօնը վարել է պ. Պ. Տուքուրեան։ Դպրոցի գրավաճառանոցի կառավարչի պաշտօնը շարունակել է վարել պ. Տ. Աբգարեան։ Դպրոցների գրադարանապետի պաշտօնը վարել է Տէր Վ. քհնյ Աղանեան։ Աշակերտական միութեան ղեկավարութիւնը ստանձնել է տ. Ն. Գերասիմեան։ Գիշերօթիկների հսկիչի պաշտօնը Նոր-Ջուղայի Հոգևոր դպրանոցի Վարչութեան կողմից յանձնուել է պ. Ալ. Յովհաննիսեանին։

Դասարանական դաստիարակի պաշտօնը կատարել են՝

Գ. Քանանեան մանկ. և դպրոցում՝

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ա. | բաժ. | մանկ. | — | օր. | Մ. | Սիմէոնեան |
| Բ | » | » | — | օր. | Կ. | Յարութիւնեան |
| Ա. | » | հ. | — | տ. | Ծ. | Գալստեան |
| Ա. | » | գ. | — | տ. | Վ. | Կարապետեան |
| Բ | » | հ. | — | օր. | Ն. | Ջոհրաբեան |
| Բ | » | գ. | — | օր. | Ծ. | Վարդանեան |
| Գ | » | հ. | — | օր. | Ի. | Ջոհրաբեան |
| Գ | » | գ. | — | օր. | Ո. | Յովսէփեան |
| Ա. | դաս. | հ. | — | պ. | Տ. | Աբգարեան |
| Ա. | » | գ. | — | պ. | Պ. | Տուքուրեան |

### Ս. Կատարինեան դպրոցում՝

| | | | |
|---|---|---|---|
| Բ դաս.— | Տէր-Վ. | քհնյ | Աղանեան |
| Գ » — | պ. | Ե. | Դաւթեան |
| Դ » — | պ. | Ս. | Աբգարեան |
| Ե » — | պ. | Ալ. | Յովհաննիսեան |
| Զ » — | տ. | Ն. | Գերասիմեան |

### Կենտրոնական դպրոցում՝

| | | | |
|---|---|---|---|
| Բ դաս.— | Տէր-Գ. | քհնյ | Կիրակոսեան |
| Գ » — | պ. | Ա. | Յարութիւնեան |
| Դ » — | պ. | Մ. | Կարապետեան |
| Ե » — | » | » | » |
| Զ » — | պ. | Ա. | Յարութիւնեան |

Աշակերտ-ուհիների նիւթական վիճակին ու ընտանեկան հանգամանքներին մօտիկից ծանօթանալու և պէտք եղած խորհուրդները տալու համար՝ այս տարի դաստիարակները Ջրօրհնէքի արձակուրդին շրջել են իրանց սաների տները։

Ինչպէս ասացինք, այս տարի յաջողուեցաւ դպրոցների համար ունենալ մշտական վերակացուներ. սակայն բոլոր վերակացուներն էլ դասերով ծանրաբեռնուած են եղել. այս հանգամանքը փոքր արգելք չէ եղել վերակացութեան գործի յաջող կատարման համար։ Ցանկալի է, որ միւս տարի վերակացուները, որքան կարելի է, քիչ դասեր ունենան։ Հսկողութեան գործը խիստ բարդ լինելու պատճառով՝ Գ. Քանանեան դպրոցի համար մի մշտական վերակացու չէր կարող բաւական համարուել. այս նկատումով շաբաթը շաբաթ հերթական վերակացութիւն են կատարել հետևեալ ուսուցիչները՝

| | |
|---|---|
| պ. Ս. Աբգարեան | օր. Ն. Զոհրաբեան |
| պ. Տ. Աբգարեան | տ. Վ. Կարապետեան |
| տ. Ծ. Գալստեան | պ. Ալ. Յովհաննիսեան |
| օր. Ի. Զոհրաբեան | օր. Մ. Սիմէոնեան |



Ս. Կատարինեան դպրոցի մշտական վերակացութիւնը սկզբում կատարում էր օր. Ի. Զոհրաբեան, որը ֆիզիքական անկարողութեան պատճառով հրաժարուելով այդ պաշտօնը յանձնուեց օր. Ծ. Վարդանեանին։ Երեք դպրոցներում էլ հսկողութիւնը տարուել է գոհացուցիչ չափով։ Աշակերտական խոշոր անկարգութիւններ տեղի չեն ունեցել. եղածները մեծ մասամբ հասակի հետ կապուած չարաճճիութիւններ են եղել, իսկ կոպտութեան ու անբարեկրթութեան երևոյթները՝ միջավայրի անխուսափելի ազդեցութեան արտայայտութիւններ։ Դիսցիպլինայի ուժեղացման համար՝ միւս տարի Գ. Քանանեան դպրոցում անհրաժեշտ է ունենալ 2 մշտական վերակացու, որովհետև հերթական վերակացութիւնը՝ դպրոցական զանազան հանգամանքների ու տեխնիքական անյարմարութիւնների պատճառով՝ այս տարի շատ քիչ արդիւնք է տուել։ Ս. Կատարինեան դպրոցի վերակացութիւնն էլ պէտք ունի քիչ ուժեղանալու։

1004
15998

### ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Այս տարի դասերից բացակայել են հիւանդութեան, կամ այլ յարգելի պատճառներով—

| | | |
|---|---|---|
| տ. Ն. Գերասիմեան | 162 | ժամ |
| տ. Վ. Կարապետեան | 72 | » |
| օր. Ծ. Վարդանեան | 57 | » |
| օր. Ռ. Յովսէփեան | 50 | » |
| Միրզ. Մահմուդ | 41 | » |
| պ. Ա. Յովհաննիսեան | 36 | » |
| օր. Ն. Զոհրաբեան | 34 | » |
| օր. Ի. Զոհրաբեան | 25 | » |
| Տէր-Ե. քհնյ. Յովհանն. | 20 | » |
| » Վ. քհնյ. Աղանեան | 20 | , |
| » Գ. քհնյ. Կիրակոս. | 10 | » |
| օր. Կ. Յարութիւնեան | 12 | » |

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| պ. | Ե. Գուլթեան | 10 | ժամ |
| պ. | Պ. Նուքուրեան | 9 | » |
| պ. | Մ. Կարապետեան | 7 | » |
| պ. | Ա. Գերասիմեան | 5 | » |
| պ. | Ս. Աբգարեան | 4 | » |
| պ. | Տ. Աբգարեան | 3 | » |
| պ. | Ա. Յարութիւնեան | 1 | » |
| օր. | Մ. Սիմէոնեան | 1 | » |
| տ. | Ծ. Գալստեան | 1 | » |

Գումար՝ 589 ժ.

Աւելորդ դասեր պարապել են՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| պ. | Ա. Գերասիմեան | 50 | ժամ. | |
| » | » » | 17 | » | (Բան. տես. Զ դաս.) |
| պ. | Ալ. Յովհաննիսեան | 37 | » | |
| տ. | Ն. Գերասիմեան | 35 | » | (շաբաթ. 2 դաս Զ դ. մինչև յունուար:) |
| օր. | Ն. Զոհրաբեան | 15 | » | |
| պ. | Պ. Նուքուրեան | 4 | » | |
| պ. | Ս. Աբգարեան | 3 | » | |
| օր. | Ծ. Վարդանեան | 2 | » | |
| պ. | Տ. Աբգարեան | 2 | » | |
| օր. | Ո. Յովսէփեան | 1 | » | |

Գումար՝ 166 ժամ.

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Անցեալ տարուայ պէս՝ այս տարի էլ Մանկավարժական ժողովի որոշման համաձայն դպրոցների բարձրագոյն դասարանների աշակերտ-աշակերտուհիները համագործակցել են դպր. «Աշակերտական Միութեան» մէջ: Աշակերտ. Միութեան նպատակներն ու միջոցները միևնոյնն են, ինչ որ անցեալ տարի հաստատուած է եղել Մանկավարժական ժողովի կողմից: Աշ. Միութիւնը կարողացել է գոհացուցիչ



կերպով ծառայել իր նպատակին և դաստիարակող ու զարգացնող մի հաստատութիւն հանդիսանալ աշակերտութեան համար: Բարեկենդանին Աշ. Միութիւնը կազմակերպել է մի ներկայացում, որի մէջ աչքի էր ընկնում բարձր դասարանների սաների համագործակցելու, գործ ղեկավարելու փափագն ու բաւարար կարողութիւնը: Ներկայացման մասնակցող աշակերտներից մի քանիսն աչքի ընկան իրանց մտածուած խաղով: Այդ ներկայացումից և նոր տարուայ ու բարեկենդանի դպրոցական երեկոյթների բուֆէտից Աշակ. Միութիւնը ունեցել է մօտ 90 թուման արդիւնք: Անցեալ տարուանից մնացած 199 ղրանի և իրանց անդամավճարների հետ այս տարուայ ընդհ. մուտքն եղել է 1331 ղրան, $52^1/_2$ ս.: Այս գումարի մի մասը Աշ. Միութեան ընդհ. ժողովի որոշման համաձայն՝ յատկացուել է դպր. գրադարանի համար նոր գրքեր բերել տալուն, մի մասը (55 թուման) որոշուած է պահել իբր հիմնական դրամագլուխ, միւս մասն էլ յատկացուել է դպրոցական գրադարանի գրքերը կազմել տալուն:

Աշ. Միութեան ժողովներում աշակերտների զարգացման համապատասխան զանազան նիւթերի մասին տրուել են մի քանի դասախօսութիւններ՝ Միութեան ղեկավար տ. Ն. Գերասիմեանի և պ. Ալ. Յովհաննիսեանի կողմից: Յաճախ աշակերտներն էլ դասախօսել են իրանց մատչելի զանազան նիւթերի մասին: Եղել են դիսկուսիաներ, կարծիքների փոխանակութիւններ և այլն:

Աւելի քան ակնյայտ է, որ Աշ. Միութիւնը դառնում է մի կենսունակ ու դաստիարակիչ օրգան՝ նպաստելով աշակերտութեան ինքնազարգացմանը, ինքնագործունէութեանն ու բարեկրթութեանը:

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամեն մի բարեկարգ դպրոցի համար ինչքան որ անհրաժեշտ է ունենալ հիմնական ու մանրամասն ծրագիր, այնքան էլ անհրաժեշտ է ունենալ նաև ներքին կանոնադրութիւն՝ դպրոցական զանազան մարմինների ու պաշտօնեաների իրաւունքների ու պարտականութիւնների սահմանները ճշտելու և գործերը խելացի ու անսայթաք առաջ վարելու համար։ Այդ էական պահանջին անսալով և Թեմիս Գեր. Առաջնորդի 1912 յունուար 1-ի առաջադրութեան համաձայն՝ կազմեցինք մի ներքին կանոնադրութիւն, որը խմբագրուելով և ընդունուելով մանկավարժական ժողովի կողմից՝ յանձնուեց Հոգաբարձ. ժողովին. վերջինս էլ հարկ եղած բարեփոխումներն անելով առաքեց Ս. Էջմիածին Թեմիս Գեր. Առաջնորդ Ս. Սրբեսլ. Այվազեանին՝ ի հաստատութիւն։ Յոյս ունինք, որ այս կանոնադրութիւնը մի խոշոր պլիւս պէտք է մտցնէ դպրոցական գործի բարեկարգութեան և յառաջադիմութեան մէջ։ Ամեն ինստիտուտ իւր նախնական, պրիմիտիւ վիճակի մէջ իբրև ղեկավարող օրէնք ունեցել է միայն աւանդութեամբ սրբագործուած սովորոյթը, բայց հասնելով որոշ աստիճանի՝ գրաւոր օրէնքներ սահմանելու անհրաժեշտ կարիքն է զգացել։ Կանոնադրութիւնս կազմելիս՝ բացի այլևայլ աղբիւրներից՝ անհրաժեշտօրէն ի նկատի ենք ունեցել նաև տեղական պայմանները, դպրոցում ընդունուած աւանդական խելացի սովորութիւններն ու վերջին երկու ուսումնական տարեշրջանների մանկավարժ. ժողովների որոշումներն։ Ներքին կանոնադրութեան յաւելուածը, որ վերաբերում է աշակերտներին, նրանց ծնողներին ու խնամակալներին, արդէն տպագրուած և բաժանուած է աշակերտուհիների ծնողներին։ Ծնողների ու խնամակալների բարեհաճ ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ կանոնադրութեան վերայ։ Այդ կանոններին պահպանմանն ու գործադրութեանը խստիւ պէտք է հետևէ դպր. Վարչութիւնը։



## Բ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ-ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Դասարանների ջեռուցումը այս տարի եղել է համեմատաբար աւելի գոհացուցիչ, քան անցեալ տարի։ Այս տարի շինել են տրուած նոր մեծ վառարաններ՝ Ս. Կատ. և Կենտր. դպրոցների դասարանների ու սրահների համար։

Լուսաւորութիւնը անցեալ տարի անգոհացացուցիչ էր գլխաւորապէս Ս. Կատ. դպրոցի հիւսիս նայող դասարաններում, այդ անյարմարութիւնը վերացնելու համար՝ այս տարի այդ դասարանների առաստաղներին յատուկ լուսամուտներ են դրուած, որոնց շնորհիւ դասարանների լոյսը բաւական առատացել է։

Այս տարի շինել են տրուած 50-ի չափ նոր գրասեղան-նստարաններ. անցեալ տարուայ մի քանի դասարանների հին ու անգործնական ձևի սեղան-նստարանները չկան այլևս։ Բոլոր գրասեղան-նստարանները միակերպ են, ունին յետծալուող տախտակներ։ Ընդհանուր առմամբ առողջապահական նկատումներով գրասեղան-նստարանների ձևը պէտք է համարել գոհացուցիչ։

Անցեալ տարուայ վերջին՝ դպր. Հոգաբարձութիւնը աշխարհագրական ու պատմական քարտէզների, քիմիական ու ֆիզիքական կոլլեկցիաների և մանկապարտէզի համար պիտանի իրեղէնների պատուէրներ է տուել, բայց դժբախտաբար դրանցից ոչ մէկը, բացառութեամբ վերջինների, մինչև այժմ չէ հասել՝ ճանապարհների հաղորդակցութեան անկանոնութեան պատճառով։

Պէտք եղած դասագրքերի և ուրիշ դասական պիեսների մեծագոյն մասը բերել է տրուել Կովկասից. միայն մի քանի յարմար դասագրքեր հնարաւոր չեղաւ ձեռք բերել, որի պատճառով ստիպուած եղանք ուրիշ դասագրքեր գործածել։

Կրկին պարտք ենք համարում յիշեցնել դպր. Պատ. Հոգաբարձութեան, որ անհրաժեշտ է բերել տալ բն. պատմու-

թեան և ուրիշ առարկաների համար անհրաժեշտ կոլլեկցիաներ, մօդելներ, նկարներ և այլն. դրանք մեծ յեղաշրջում պիտի առաջ բերեն ուսուցման գործի մէջ։ Սոսկ դասագրքով շատ առարկաների ուսուցումը միանգամայն թերի ու անօգուտ պիտի համարել, որքան էլ դասատուն ճիգեր ու մանկավարժական միջոցներ չխնայէ։ Ամեն գիտելիքի ու առարկայի հիմքը առարկայական ուսուցումը պիտի լինի։ Այդ ուղղութեամբ ենք ձգտում միշտ առաջ գնալ հնարաւոր եղած բոլոր միջոցներով։

## ԱՇԱԿԵՐՏ—ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ԹԻՒԸ

Աշակերտ-ուհիների ընդհ. թիւը տարուայ սկզբին եղել է 422, յունուարին՝ 515, իսկ տարուայ վերջին՝ 545։ Գ.-Քանանեան մանկապարտէզի և Գ.-Քանանեան դպրոցի աշակերտ-աշակերտուհիների ընդհ. թիւն է 429, Ս. Կատարինեան դպրոցինը՝ 59, Կենտրոնական դպրոցինը՝ 57։ Աշակերտ-ուհիները դասարաններում տեղաւորուած են եղել հետեւեալ կարգով—

**Գ.-Քանանեան դպրոց**

| | |
|---|---|
| Մանկ. (3 բաժ.) | 145 հոգի |
| Ա բ. հ. | 31 » |
| Ա բ. գ. | 33 » |
| Բ բ. հ. | 42 » |
| Բ բ. գ. | 41* » |
| Գ բ. հ. | 28* » |
| Գ բ. գ. | 35 » |
| Ա դ. հ. | 36 » |
| Ա դ. գ. | 38 » |
| | 429 » |

**Ս. Կատարինեան դպրոց**

| | |
|---|---|
| Բ դ. | 20 հոգի |
| Գ դ. | 14 » |
| Դ դ. | 12 » |
| Ե դ. | 6 » |
| Զ դ. | 7 » |
| | 59 » |

**Կենտրոնական դպրոց**

| | |
|---|---|
| Բ դ. | 22 հոգի |
| Գ դ. | 13 » |
| Դ դ. | 12 » |
| Ե դ. | 5 » |
| Զ դ. | 5 » |
| | 57 » |

Համագումար՝ 545 հոգի

* Ծանօթ.— Այս երկու բաժանմունքների սաների թուի զգալի տարբերութեան պատճառը՝ դասարանների ընդարձակութեան տարբերութիւնն է։



| | Երթեւեկ | Գիշերօթիկ |
|---|---|---|
| Գ.-Քան. դպր. | 271 | 13 |
| Ս. Կատ. դպր. | 59 | — |
| Կենտր. դպր. | 41 | 16 |
| | 371 | 29 |

Այս 29 հոգին Հոգեւոր դպրոցի գիշերօթիկներն ու Ս. Կատարինեան որբանոցի սաներն են։

| | Ջուղայեցի | Օտար վայրերից (գլխաւորապէս՝ շըրջակայ գաւառներից) |
|---|---|---|
| Գ.-Քան. դ. | 227 | 57 |
| Ս. Կատ. դ. | 53 | 6 |
| Կենտր. դ. | 31 | 26 |
| | 331 | 89 |

Աշակերտների ընդհանուր թիւն է 266, իսկ աշակերտուհիներինը՝ 279։ Մանկապարտէզը չհաշուելով՝ դպրոցների աշակերտ-ուհիների թիւն է 400, որից 201 տղայ, 199 աղջիկ։ Այս տարուայ նորեկները, որ արձանագրուած են ընդունելութեան մատեանում, 175 հոգի են։ Դէպի ազգ. դպրոցները այս տարի սկսուել էր մի ուժեղ հոսանք, գալիս էին նաև տեղւոյս օտար դպրոցներից, սակայն դիմողների մի մասին մենք չենք ընդունել՝ մի քանիսին օտար դպրոցից արձակուած լինելու, ոմանց էլ՝ դասարաններում ազատ տեղ չունենալու պատճառով։ Օտար դպրոցներից եկածներից մի քանիսը կրկին հեռացան՝ նկատելով որ չպիտի կարողանան մեր դպրոցների կուրսին հետեւել՝ շատ առարկաների միանգամայն անծանօթ լինելու պատճառով։ Դէպի ազգային դպրոցներն եղած ուժեղ հոսանքի պատճառը պիտի փնտրել ոչ թէ մեր, այլ ծնողների ու հասարակութեան վերաբերմունքի փոփոխութեան մէջ։ Մենք դեռ անցեալ տարի շեշտում էինք, որ դպրոցական դիսցիպլինն ու օրէնքը մեզ համար միշտ բարձր են և մենք այսօր էլ նշանախեց անգամ փոփոխած չունինք. գոհ ենք հասարակութեան բարեացակամ և անաչառ վերաբերմունքից։ Սակայն լաւ պէտք

է գիտենալ, որ ոչ միայն այսօր այլ միշտ էլ զաւակների դաստիարակութեան գործը անձնական հաշիւների հետ պէտք չէ խառնել, ապա թէ ոչ շատերը պիտի մնան պատասխանատու իրանց զաւակների ու սեպհական խղճի առջև։

Ուրախալի է, որ այս տարի թօշակի համազգեստի և ուրիշ այս կարգի անմիտ պատճառներով դպրոցներից հեռացողներ չեն եղել՝ չհաշուելով մէկ-երկու դէպք։

## ՀԱՄԱԶԳԵՍՏ

Դպրոցներիս 400 աշակերտ-ուհիներից 305-ը համազգեստ ունին, իսկ 95-ը չունին. մանկապարտէզի սաներից էլ շատերն ունին. չունին մեծ մասամբ ուսումնական տարուայ վերջերին ընդունուածները։

Համազգեստ

| | ունին | չունին |
|---|---|---|
| Գ.-Քանանեան դպրոցում | 202 | 82 |
| Ս. Կատարինեան » | 59 | — |
| Կենտրոնական » | 44 | 13 |

Դպրոցական համազգեստը անհրաժեշտ պիտի համարել մանաւանդ այսպիսի վայրում, ուր աշակերտների մեծագոյն մասը խիստ անկանոն է հագնւում։ Այս մասին ուրիշ առիթներով շատ ենք խօսել. ցաւալի է, որ կան ծնողներ, որոնք մինչև այժմ էլ յամառութեամբ շարունակում են իրանց զաւակներին առանց համազգեստի դպրոց ուղարկել։ Աշակերտներից շատերն հագնում են կեղտոտ։ Կան ծնողներ, որոնք երբեք ուշադրութիւն չեն դարձնում իրանց երեխաների մաքրութեան ու կանոնաւորութեան վրայ. փոքրիկ աշակերտներից ոմանք երբեմն դպրոց են գալիս՝ գլուխ չսանրած, ոմանք՝ առանց գուլպայի, զգեստի կոճակները կտրատուած ևլն։ Մաքրութեան համար պէտք չէ որ մարդ անպայման հարուստ լինի. կարելի է հագնուել շատ հասարակ, անշուք, հին՝ բայց մաքուր, չպատառոտուած։ Այս բոլորի վրայ պարտք ենք համարում կրկին հրաւիրել ծնողների ուշադրութիւնը։



## ԲԺՇԿ. ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌՈՂՋ. ԸՆԴՀ. ՎԻՃԱԿ

Այս տարի էլ դպրոցներիս աշակերտ-ուհիների առողջական վիճակի քննութեան նեղութիւնն յանձն առաւ Պօղոսխանեան բուժատան բժշկապետ դոկտ. Մ. Ռանդոլֆ։ Բժշկական քննութեան արդիւնքը հետևեալն է—

Առողջական ընդհանուր վիճակ

| | ուժեղ | միջակ | թոյլ |
|---|---|---|---|
| Գ.-Քան. դ. | 203 | 71 | 10 |
| Ս. Կատ. դ. | 55 | 4 | — |
| Կենտր. դ. | 47 | 9 | 1 |
| | 305 | 84 | 11 |

հիւանդացել են

| | |
|---|---|
| Գ.-Քան. դ. | 230 |
| Ս. Կատ. դ. | 40 |
| Կենտր. դ. | 32 |
| | 302 |

Հիւանդութեան դէպք եղել է
(ամենքը իրար վրայ քանի անգամ են հիւանդացել)

| | | |
|---|---|---|
| Գ.-Քան. դ. | 487 | դէպք |
| Ս. Կատ. դ. | 67 | » |
| Կենտր. դ. | 35 | » |
| | 589 | » |

Օրական քանի ժամ են քնում (միջին հաշուով)

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գ.-Քան. | դպր. | աշակերտ-ուհիները | 8 1/2 | ժամ |
| Ս. Կատ. | » | աշակերտուհիները | 7 3/4 | » |
| Կենտր. | » | աշակերտները | 8 | » |
| | | միջին թուով՝ | 8 | ժամ |

Ծաղկի պատուաստում

| | պատուաստած է | պատուաստած չէ |
|---|---|---|
| Գ.-Քան. դ. | 227 | 57 |
| Ս. Կատ. դ. | 52 | 7 |
| Կենտր. դ. | 53 | 4 |
| | 332 | 68 |

Պատուաստածների մէջ հաշուած են նաև նրանք, որոնք ծաղիկ հիւանդութիւն ունեցել ու առողջացել են։

Դպրոցական բժշկական քննութեան նշանակութիւնը շատ մեծ է. յարգելի դոկտ. Ռանդոլֆ խիստ զբաղուած լինելով՝ հնարաւորութիւն չունէր երեխաների բժշկական քննութեան պէտք եղած չափով ժամանակ յատկացնելու։ Այս մասին ևս դպր. Պատ. Հոգաբարձութիւնը պէտք է լուրջ մտածէ՝ կամ ազատ ժամանակ ունենալու հնարաւորութիւն ստեղծելով դոկտ. Ռանդոլֆի համար, կամ ուրիշ տնօրինութիւն անելով։

Բժշկական քննութեամբ պէտք է մանրամասն ճշտել երեխաների ներքին գործարանների ու զգայարանների առողջ. վիճակը, սննդառութիւնը, մտքի յոգնածութիւնը և այլն և այլն։

Այս տարի Գ.- Քանանեան դպրոցում հաստատուած է դպրոցական փոքրիկ դեղատուն, որի մէջ պահւում են մի քանի անհրաժեշտ դեղեր, գլխաւորապէս՝ վէրքեր լուանալու և փաթաթելու. երեխաները փոքրիկ քերծուածներ ստանալիս, կամ թեթև վիրաւորուելիս՝ անմիջապէս հնարաւորութիւն են ունենում դպրոցական դեղատուն դիմելու՝ նախնական դարմանումն ստանալու համար։ Մանկավարժական ժողովի որոշմամբ դեղատան հսկիչի պաշտօնը յանձնուեց օր. Մ. Սիմէոնեանին։ Պարտք եմ համարում՝ դպր. Ուսումնական Վարչութեան կողմից յայտնելու խորին շնորհակալութիւն յարգելի դոկտ. Մ. Ռանդոլֆին, որը սիրով յանձն առաւ իր վրայ դրուած պարտականութիւնը։

## ԱՇԱԿԵՐՏ—ՈՒՀԻՆԵՐԻ ՆԻՒԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ջուղայի ազգաբնակութեան նիւթական աննախանձելի վիճակի պատկերը հասկանալի պատճառով պարզօրոշ կերպով անդրադարձած երևում է դպր. աշակերտութեան վրայ, ինչպէս կը տեսնէք հետևեալ վիճակագրութեան մէջ։



| | հայրուստի զաւակ են | միջին կարող. տ. զ. | չքաւ. զ. | աղքատի զաւ. |
|---|---|---|---|---|
| Գ.-Քան. դ. | 9 | 98 | 110 | 67 |
| Ս. Կատ. դ. | 3 | 32 | 16 | 8 |
| Կենտր. դ. | 5 | 27 | 18 | 7 |
| | 17 | 157 | 144 | 82 |

Ծնողների զբաղումներին համաձայն՝ աշակերտները հետևեալ կարգերին են բաժանւում—

| | Գ.-Քան. դ. | Ս. Կատ. դ. | Կենտր. դ. | Գումար |
|---|---|---|---|---|
| Քահանայի զաւակ | 11 | 8 | 2 | 21 |
| Ուսուցչի » | 5 | 3 | 1 | 9 |
| Մանրավաճառի » | 12 | 2 | 2 | 16 |
| Արհեստաւորի » | 62 | 11 | 14 | 87 |
| Վաճառականի » | 16 | 4 | 4 | 24 |
| Գործակատարի » | 22 | 4 | 9 | 35 |
| Երկրագործի » | 9 | — | 4 | 13 |
| Մշակի » | 21 | — | 1 | 23 |
| Ծառայի » | 46 | 5 | 5 | 56 |
| Գինավաճառի » | 10 | 2 | 4 | 16 |
| Անգործ կամ ուրիշ զբաղ. » | 69 | 20 | 11 | 100 |
| | | | | 400 |

Ձրիաբար զգեստ ստանում են

| | |
|---|---|
| Գ.-Քան. դպր. | 155 |
| Ս. Կատ. դպր. | 16 |
| Կենտր. դպր. | 24 |
| | 195 |

Ձրիաբար դասական պիտոյք ստանում են

| | |
|---|---|
| Գ.-Քան. դպր. | 167 |
| Ս. Կատ. դպր. | 18 |
| Կենտր. դպր. | 31 |
| | 216 |

Չքաւոր աշակերտուհիներին ձրիաբար զգեստ և դասական պիտոյքներ տալիս է տեղւոյս Հայուհեաց բարեգործական ընկերութիւնը, իսկ աշակերտներին՝ «Աղքատախնամ» ընկերութիւնը, որոնց պարտք եմ համարում յայտնել խորին շնորհակալութիւն։

## ԹՈՇԱԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ուրախ ենք, որ անցեալ տարուայ անմիտ ողբն ու աղաղակը չկար այլեւս թոշակի խնդրի համար։ Երեխաներին թոշակի պատճառով անցեալ տարի օտար դպրոց տանող ծնողներից շատերը այս տարի կրկին ազգային դպրոց բերին իրանց զաւակներին։—Թոշակադրամի քանակն ըստինքեան շատ չնչին պիտի համարել (տարեկան 6—40 ղռան, դասարանների կարգով), իսկ թոշակ վճարողներն էլ աշակերտութեան հազիւ $^{1}/_{3}$ են կազմում, սրա համար էլ թոշակադրամից ստացուել է համեմատաբար չնչին գումար՝ մօտ 230 թուման։

Դպրոցներիս աշակերտ-ուհիների թոշակատուութիւնը հետեւեալ պատկերն ունի.

| | Թոշակատու են | Զրկուած են |
|---|---|---|
| Գ.-Քան. դպրոցում | 86 | 198 |
| Ս. Կատ. » | 35 | 24 |
| Կենտր. » | 24 | 33 |
| | 145 | 255 |

Ուրախալի է, որ Ազգ. դպր. Պատ. Հոգաբարձութիւնն որոշեց ազգ. դպրոցներում պաշտօնավարող դասատուներից յառաջիկայ տարուանից թոշակադրամ չվերցնել՝ նրանց նոյն դպրոցներում սովորող զաւակների համար։ Այս որոշումը մտցրուեց դպրոցներիս ներքին կանոնադրութեան մէջ։ Մեր դպրոցների դասատուներն մանաւորապէս, որ համեմատաբար փոքրագումար ռոճիկներ են ստանում, անհրաժեշտօրէն պիտի ունենային այս արտօնութիւնը, որը տրւում է շատ տեղերում էլ նման պարագաներում։

---



# Գ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ—ԿՐԹԱԿԱՆ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ներկայ ուսումնական տարեշրջանում Մանկվ. Խորհուրդը ունեցել է 27 նիստ, որոնց զբաղման նիւթն են եղել զանազան մանկավարժական, դիտակտիքական, մեթոդական, վարչական, ուսումնական-տեխնիքական և այլ խնդիրներ։ Մանկավարժական ժողովների ուշադրաւ զբաղումներից պիտի համարել՝ դպրոցական ներքին կանոնադրութեան մշակման հետ կապուած աշխատանքները, փորձնական դասերի առթիւ կատարած թէ ընդհանուր, և թէ մասնաւոր բնոյթ ունեցող տեսութիւններն ու դիտողութիւնները, դասագրքերի ընտրութեան աշխատանքները, ընթերցանութեան գործի կարգադրումը, դպրոցական երեկոյթների ու հանդէսների ծրագրի ու կատարման հետ կապուած աշխատանքների կարգաւորումը, փոխադրութեանց որոշումը, դասարանական ու դպրոցական ընդհ. վիճակացոյցների ստուգումն ու ամփոփումը. այլև դիսցիպլինայի ու դաստիարակչական զանազան խնդիրների, նոր աշակերտների ընդունելութեանց և ընթացիկ ուրիշ խնդիրների վերաբերմամբ կատարած խորհրդածութիւններ, որոշումներ և այլն և այլն։

Մանկավարժական ժողովը լիակատար լիազօրութիւն ունենալով դպրոցների ուսումնական խնդիրների մէջ՝ ամեն կերպ ջանացել է իր վրայ դրած պարտականութիւնները տանել լրջութեամբ ու շրջահայեցութեամբ՝ անսայթաք յառաջ գնալով դէպի դաստիարակութեան և ուսուցման գործի լաւագոյն իդէալները։

Յիշենք այստեղ, որ Մանկվ. ժողովների քարտուղարութեան պաշտօնը ստանձնել էր պ. Ա. Յարութիւնեան։

## ԾՐԱԳԻՐ ԵՒ ԻՐ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ինչպէս յայտնի է, անցեալ տարի Մանկավ. Խորհուրդը մշակել էր ուսումնական ծրագիր, որը հարկաւոր վաւերացումն ընդունելուց և տպագրուելուց յետոյ, այս տարի դրուած էր գործադրութեան։ Իրականութիւնն եկաւ միանգամայն արդարացնելու մեր յոյսերը՝ իրաւամբ ծրագրի գոյութիւնն ու գործադրութիւնն անգնահատելի ծառայութիւն մատուցին դպրոցներիս ուսումնական մասի բարեկարգման և յառաջադիմութեան գործին։ Նա եղաւ մի ճըշմարիտ առաջնորդ՝ հանելով դասատուներին անորոշ ու երերուն դրութիւնից, որը անխուսափելի էր ծրագրի չգոյութեան դէպքում։ Դասարանների համար որոշուած բոլոր առարկաները՝ շաբաթական դասերի սահմանուած քանակով՝ շատ աննշան բացառութեամբ՝ հնարաւոր եղաւ հէնց այս տարուանից անցնել։— Ծրագրում որոշուած 31 առարկաներից 28-ը կարելի եղաւ անթերի աւանդել. հնարաւոր չեղաւ աւանդել— ա) Առտնին տնտեսութիւն՝ նոյնիսկ դասատուի համար որևէ յարմար դասագիրք գտնելու անհնարինութեան պատճառով, բ) Մարմնամարզութիւն դասատուի չգոյութեան և գ) Ձայնագրութիւն՝ դասերի բաշխման հետևանքով ազատ ուսուցիչ չմնալու պատճառով։ Յոյս ունինք, որ միւս տարի հնարաւոր պիտի լինի այս երեք առարկաներն էլ անթերի աւանդել։ Մարմնամարզութիւն աւանդելու համար՝ նպատակայարմար է ունենալ մի մարմնամարզագէտ ուսուցիչ. շատ լաւ կը լինէր, եթէ այդ ուսուցիչը միաժամանակ նաև սլոյդ (ձեռարուեստ) աւանդել կարողանար։ Այս մասին յիշատակելով՝ հրաւիրում ենք Ազգ. դպրոցների Հոգաբարձութեան լուրջ ուշադրութիւնը։

Աւանդուող առարկաների մեծագոյն մասը հնարաւոր է եղել անցնել ծրագրում սահմանուած լիակատար ծաւալով՝ բացառութեամբ նախորդ տարիներում չաւանդուած



առարկաների, որոնց կուրսի մէջ վերջին երկու տարիներում անխուսափելի և մեզնից անկախ յապաղում է առաջ եկել։ Այսպէս՝ ներկայ Զ դասարանը՝ երկրորդ տարին լինելով, որ Ընդհանուր պատմութիւն է սովորում՝ հնարաւորութիւն չի ունեցել անցնելու թէ հին, թէ միջին, և՛ թէ նոր դարերի լիակատար պատմութիւնը, որովհետև անցեալ տարի ստիպուած է եղել անցնել Գ և Դ դասարանների, իսկ այս տարի՝ Ե դասարանի կուրսը. նոյնը պիտի ասենք նաև Երկրաչափութեան ու մի քանի այլ առարկաների մասին։

Հոգաբարձական և Մանկավ. ժողովներն ի նկատի ունենալով տեղական հանգամանքներն և առաջնորդուելով տեսական ու գործնական նկատումներով՝ նպատակայարմար են գտել առաջիկայ ուսումն. տարում Ֆրանսերէն դասերը փոխարինել Ռուսերէնով, որն առ այժմ պիտի աւանդուի Ֆրանսերէնի համար որոշուած չափով և նոյն ծրագրով, իսկ Ֆրանսերէնը թողնել իբրև ոչ պարտադիր առարկայ։

## ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ներկայ ուսումնական տարեշրջանում գումարուել է երեք ծնողական ժողով։ Առաջին ժողովին դպր. տեսուչ Ա. Գերասիմեան խօսել է Մանկավարտէգի, Աշակերտների բացակայութեան և ուրիշ դպրոցական–դաստիարակչական խնդիրների մասին։ Երկրորդ ժողովին խօսել է դոկտ. Մ. Ռանդոլֆ Դպրոցական առողջապահութեան վերաբերեալ խնդիրների մասին։ Երրորդ ժողովին խօսել է կրկին Ա. Գերասիմեան Ֆիզիքական կրթութեան, սլոյդի և արհեստագիտական կրթութեան մասին։ Շատ ցանկալի է, որ ծնողները ժողովներին լոկ ունկնդրութեամբ չբաւականանան, այլ նաև իրանց հետաքրքրող խնդիրների մասին խօսեն, հարցեր տան ևայլն։

## ՖԻԶԻՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒ ՁԵՌԱՐՈՒԵՍՏ

Ինչպէս վերն յիշեցի՝ այս տարի առիթ ունեցել եմ խօսելու ֆիզիքական աշխատանքի ու ձեռարուեստի (սլոյդի) կրթիչ ու դաստիարակիչ նշանակութեան մասին։ Ցաւալի է, որ հայկական դպրոցներից, գրեթէ, ոչ մէկում ձեռքի աշխատանքը իր արժանի տեղը չունի գրաւած, եթէ չասենք՝ բնաւ չի աւանդւում։ Դպրոցներիս արհեստագիտական ճիւղերում էլ աշակերտներն երբեք չեն փափագում որևէ արհեստ սովորել։ Այստեղ առհասարակ ֆիզիքական աշխատանքն ու արհեստագիտութիւնը չեն համարւում արժանավայել զբաղումներ։ Սա դժբախտ ու կործանիչ թիւրիմացութիւն է, որ կարող է մի ժողովրդի դէպի տնտեսական քայքայում առաջնորդել։

Մենք ստատիստիկա կազմեցինք՝ իմանալու համար թէ դպրոցների աշակերտութեան որ տոկոսն է տնային աշխատանք կատարում։ Այդ վիճակագրութիւնը հետևեալն է—

Տնային աշխատանք կատարում են

| | | |
|---|---|---|
| Գ.-Քանանեան | դպր. | 203 |
| Ս. Կատարինեան | » | 58 |
| Կենտրոնական | » | 43 |
| | | 304 |

Այսպիսով դուրս է գալիս, որ աշակերտութեան $^3/_4$ մասը տնային աշխատանք կատարում է. սակայն եթէ ի նկատի ունենանք, որ դրանցից շատերինը շատ չնչին ու թեթև աշխատանք է, դիւրութեամբ կարող ենք այս թիւը կիսել և ընդունել 150—մի թիւ, որ Ջուղայի պէս վայրի համար շատ աննշան է։ Նիւթական աննախանձելի վիճակ, համատարած չքաւորութիւն—բայց այնուամենայնիւ աշխատել, կամ ուրիշ որևէ տան գործ անել շատ քիչ են սիրում. Ի դէպ, աւելացնենք նաև՝ ծառայել երբեք չեն սիրում և ոչ ոք չի վշտանայ՝ համոզուած լինելով որ ես էլ ցաւելով եմ



ասում՝ շատ չունևորներ էլ մուրողութիւնը գերադասում են աշխատանքից։

Ուրախալի երևոյթ պէտք է համարել այն, որ վերջին երկու տարուայ ընթացքում ձեռագործից բացի աղջիկներին աւանդուել է նաև կարուձև, որի մէջ աղջիկները ցոյց են տուել գովելի յառաջադիմութիւն՝ պատրաստելով շքեղ ձեռագործներ և նուրբ ու ճաշակաւոր նիւթեր, որոնց ցուցադրումը Ն.-Ջ. Հ. Կանանց Բարեգործական ընկերութեան կողմից, հակառակ եղած խոստման՝ տեղի չունեցաւ սոյն ակտի հանդիսին։

## ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Այս տարի ուսուցիչների տուած փորձնական դասերի թիւն է 8։ Փորձնական դասերը տեղի են ունեցել առաւելապէս ստորին դասարաններում։ Փորձնական դասեր են տուել հետևեալ ուսուցչուհիներն և ուսուցիչները—

1. Տիկին Ծ. Գալստեան — Թուաբան. Ա բ. գ.
2. Օր. Ի. Զոհրաբեան — Իրազնն. Գ բ. հ.
3. Տիկ. Վ. Կարապետեան — Հայերէն Ա բ. հ.
4. Օր. Կ. Յարութիւնեան — Ֆրէօբ. պարգև, մանկ.
5. Պ. Պ. Շուքուրեան — Անգլ. Գ բ. հ.
6. Օր. Ծ. Վարդանեան — Հայ. լ. Գ բ. հ.
7. Միրզա Մահմուդ — Պարսկ. Գ բ. գ.
8. Օր. Ո. Յովսէփեան — Հայերէն Բ բ. հ.

Ամեն անգամ փորձնական դասերից յետոյ մանկավարժական ժողովում տեղի է ունեցել տրուած դասի քննութիւն։ Դասի քննութիւնը ունեցել է գործնական մեծ նշանակութիւն դասաւանդման եղանակների բարելաւման համար։—Ուսուցիչներից շատերը դասատուութեան մէջ կատարած խելացի փոփոխութիւններով ցոյց են տուել, որ կարողացել են հնարաւոր չափով օգտուել փորձնական դասերից ու նրանց քննադատութիւններից։

Փորձնական դասեր են տուել նաև Զ դասարանի ընթացաւարտները՝ իւրաքանչիւրն 2 դաս, ընդամենը՝ 22 դաս։ Ընթացաւարտների փորձնական դասերն սկսուել են մայիս ամսի սկզբից, երբ վերջիններս արդէն գոհացուցիչ չափով անցած են եղել ընդհ. մանկավարժութիւն, դիդակտիկա և մի քանի առարկաների մեթոդիկա։ — Նախքան փորձնական դասեր տալը՝ նրանք լսել են մի օրինակելի դաս (Ա. Գեր.) մշակուած Հերբարտ — Ցիլլերեան ձևական հինգ աստիճաններով և ուրիշ մի քանի դասեր՝ զանազան առարկաներից։

Աշակերտ-ուհիներից շատերն մտածուած ու յաջող դասերով կարողացան ապացուցել, որ բաւականաչափ ըմբռնել են թէ ինչ է դաստիարակի ու դասատուի պաշտօնը և ինչ ձևով ու ինչ պիտի կատարել դասարանում։

Փորձնական դասեր տուել են

1. Գասպարեան Ռ. — Հայ. Ա. բ. գ. և Անգլ. Գ. բ. հ.
2. Անդրէասեան Մ. — Կրօն. Բ. բ. գ. և Թուաբ. Բ. բ. գ.
3. Մկրտչեան Պ. — Իրագն. Ա. բ. հ. և Հայ. Բ. բ. գ.
4. Յովսէփեան Հ. — Թուաբ. Բ. բ. հ. և Կրօն. Ա. բ. գ.
5. Սիմէոնեան Հ. — Իրագն. Բ. բ. հ. և Թուաբ. Ա. բ. գ.
6. Ագամեան Ա. — Թուաբ. Գ. բ. հ. և Հայ. Գ. բ. հ.
7. Խաչիկեան Մ. — Թուաբ. Ա. բ. հ. և Իրագն. Բ. բ. գ.
8. Ստեփաննոսեան Ս. — Հայ. Բ. բ. գ. և Թուաբ. Գ. բ. հ.
9. Աբրահամեան Ա. — Թուաբ. Ա. բ. գ. և Իրագն. Բ. բ. հ.
10. Դաւիթխանեան Ս. — Իրագն. Բ. բ. հ. և Կրօն. Բ. բ. գ.
11. Աղանեան Մ. — Հայ. Բ. բ. հ. և Իրագն. Ա. բ. հ.

Ընթացաւարտները փորձնական դասեր տուել են Մանկավարժութեան դասատուի (Ա. Գեր.) ղեկավարութեամբ ու հսկողութեամբ։



Փորձնական դասերին ներկայ է եղել նաև դասարանի նոյն առարկայի դասատուն, երբեմն նաև՝ միւս ուսուցիչներից. Դասաւանդումից յետոյ միշտ տեղի է ունեցել դասի քննադատութիւն։

## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Աշակերտների ընդհանուր յառաջադիմութիւնը գնահատելու համար՝ Մանկավարժական ժողովը նպատակայարմար է գտել կազմել հետևեալ վիճակագրութիւնները — ա) Դասարանի, ապա նաև դպրոցների, աշակերտ-ուհիների քանիսի յառաջադիմութեան նիշերի միջին թիւն է լաւ, քանիսինը՝ միջակ, քանիսինը՝ թոյլ (գնահատութեան համար, անցեալ տարուայ նման, միայն այս երեք արտայայտութիւնն ենք ունեցել). բ) Դասարանի, ապա նաև դպրոցների, մի աշակերտին միջին թուով ինչ նիշեր են ընկնում, (քանի՛ լաւ, քանի՛ միջակ, քանի՛ թոյլ)։ Բացի ընդհանուր յառաջադիմութիւնից զատ-զատ գնահատել ենք նաև աշակերտ-ուհիների կիրթութիւնն, ուշադրութիւնն ու ջանասիրութիւնը։

Ահա այդ վիճակագրութիւնը —

| Քանի՛ աշակերտի տարեկան յառաջադիմութեան նիշերի միջին թիւն է — | լաւ | միջակ | թոյլ |
|---|---|---|---|
| Գ.-Քան. դպր. | 53 | 130 | 101 |
| Ս. Կատ. դպր. | 20 | 30 | 9 |
| Կենտր. դպր. | 28 | 21 | 8 |
| | 101 | 181 | 118 |

Եթէ ընդհանրացում անենք, կը տեսնենք, որ Գ.-Քանանեան դպրոցի աշակերտ-ուհիների յառաջադիմութիւնը պիտի համարել միջակից քիչ վար, Ս. Կատարինեան դպրոցի սաներինը՝ միջակից քիչ վեր, իսկ Կենտրոնական դպրոցի սաներինը՝ լաւ. իսկ երեք դպրոցների սաների ընդհ. յառաջադիմութեան միջին թիւը՝ միջակից քիչ վեր, որ մեր պայմանների մէջ պէտք է համարել գոհացուցիչ։

Մի աշակերտի միջին հաշուով ընկնում են այս նիշերը

| | | լաւ | միջակ | բոյլ |
|---|---|---|---|---|
| Գ.-Քանանեան | դ. | 2 | 4 | 4 |
| Ս. Կատարինեան | դ. | $4,^{25}$ | $4,^{5}$ | $2,^{25}$ |
| Կենտրոնական | դ. | 6 | $4,^{5}$ | $1,^{5}$ |
| | | 4 | $4,^{25}$ | $2,^{75}$ |

Այս վիճակացոյցը գալիս է լիովինապացուցելու նախորդ վիճակացոյցն ու նրա եզրակացութիւնները:

Ց ի շ ո ղ ո ւ թ ի ւ ն

| | | լաւ | միջակ | բոյլ |
|---|---|---|---|---|
| Գ.-Քանանեան | դպր. | 51 | 136 | 97 |
| Ս. Կատարինեան | դպր. | 32 | 20 | 7 |
| Կենտրոնական | դպր. | 26 | 23 | 8 |
| | | 109 | 179 | 112 |

Ջ ա ն ա ս ի ր ո ւ թ ի ւ ն

| | | լաւ | միջակ | բոյլ |
|---|---|---|---|---|
| Գ.-Քանանեան | դպր. | 55 | 107 | 122 |
| Ս. Կատարինեան | դպր. | 24 | 29 | 6 |
| Կենտրոնական | դպր. | 25 | 26 | 6 |
| | | 104 | 162 | 134 |

Ո ւ շ ա դ ր ո ւ թ ի ւ ն

| | | լաւ | միջակ | բոյլ |
|---|---|---|---|---|
| Գ.-Քանանեան | դպր. | 57 | 144 | 83 |
| Ս. Կատարինեան | դպր. | 23 | 35 | 1 |
| Կենտրոնական | դպր. | 24 | 28 | 5 |
| | | 104 | 207 | 89 |

Այս կարողութիւնների վիճակագրութեան մէջ էլ ցայտուն կերպով երեւան է գալիս միջակների գերակշռութիւնը:

Քանի՛երորդ տարին են նոյն դասարանում

| | Առաջին | Երկրորդ | Երրորդ |
|---|---|---|---|
| Գ.-Քան. դպր. | 190 | 79 | 15 |
| Ս. Կատ. դպր. | 54 | 5 | — |
| Կենտր. դպր. | 46 | 11 | — |
| | 290 | 95 | 15 |



## ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Մեր աշակերտութեան ամենամեծ թերութիւններից մէկը, որ միաժամանակ պիտի համարել նաև ծնողների թերութիւն, յաճախակի ու անտեղի բացակայութիւնն է: Առաւելապէս շատ են բացակայում փոքրիկները. չհաշուելով հիւանդութեան և այլ յարգելի պատճառներով եղած բացակայութիւնները՝ պիտի տեսնենք այնուամենայնիւ, որ բացակայութիւնների մեծագոյն մասի պատճառը երբեք յարգելի չէ,—որ երեխաների ու ծնողների անհոգութեան մէջ է կայանում: Բացակայութեան թուերն ահռելի են: Մենք դեռ առաջին կիսամեակում՝ չհաշուելով ծնողական ժողովներում արած յիշատակութիւնները՝ յատուկ գրութեամբ դպրոց հրաւիրեցինք յաճախակի բացակայող 40 աշակերտների ծնողներին, որոնց միայն մի մասն եկաւ՝ իրանց զաւակների մասին պէտք եղած տեղեկութիւններն առնելու. միւսները չբարեհաճեցին դպրոց գալ: Ահաւասիկ բացակայութեան վիճակագրութիւնը.

Քանի ժամ բացակայութիւն է եղել

| | | |
|---|---|---|
| Գ.-Քանանեան | դպր. | 24784 |
| Ս. Կատարինեան | դպր. | 2849 |
| Կենտրոնական | դպր. | 1626 |
| | | 29259 |

Միջին թուով՝ մի աշակերտի բացակայութիւնը

| | | |
|---|---|---|
| Գ.-Քանանեան | դպր. | 87 |
| Ս. Կատարինեան | դպր. | 50 |
| Կենտրոնական | դպր. | $28,^{5}$ |

29259 թիւը (ընդհ. բաց. գումար) բաժանելով 400-ի վրայ՝ իւրաքանչիւր աշակերտի բացակայութեան միջին թիւը կը լինի 73:

Եթէ ուշադրութիւն դարձնենք այս թուերի վրայ և համեմատելու լինինք դպրոցների սաների միջին յառաջա-

դիմութեան հետ, պիտի տեսնենք՝ որքան յառաջադիմութեան նիշը նուազ է եղել, այնքան բացակայութեան թիւը մեծ է եղել։ Այսպէս՝ ամենից շատ բացակայութիւն ունին Գ.-Քանանեան դպրոցի սաները (87), ապա Ս. Կատարինեան դպրոցի սաները, իսկ ամենից քիչ՝ Կենտրոնական դպրոցի սաները[1]։

Ե՞րբ արդեօք մեր յարգելի ծնողները ուշադրութեան պիտի առնեն այս հանգամանքը։—

## ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

| Գ.-Քան. դ. | փոխադր. | մնում են | վերաքննելի, | արձակւում |
|---|---|---|---|---|
| Ա. բ. հ. | 20 | 11 | — | — |
| Ա. բ. գ. | 19 | 12 | — | 2 |
| Բ. բ. հ. | 25 | 18 | — | — |
| Բ. բ. գ. | 18 | 20 | — | 3 |
| Գ. բ. հ. | 11 | 16 | — | 1 |
| Գ. բ. գ. | 17 | 16 | — | 2 |
| Ա. դ. հ. | 15 | 21 | — | — |
| Ա. դ. գ. | 11 | 22 | 5 | — |
| | 136 | 135 | 5 | 8 |

| Ս. Կատ. դ. | փոխադր. | մնում են, | վերաքնն. | արձակ. |
|---|---|---|---|---|
| Բ դ. | 12 | 8 | — | — |
| Գ դ. | 11 | 3 | — | — |
| Դ դ. | 11 | 1 | — | — |
| Ե դ. | 4 | 2 | — | — |
| Զ դ. | 6 | 1 | — | — |
| | 44 | 15 | — | — |

1) Ի դէպ, երբ ասում ենք՝ միջին թւով այս ինչ դպրոցի աշակերտը այսքան դասի է բացակայել, դա չէ նշանակում, որ բոլորն են բացակայել, այլ այն որ իւրար վրայ հաշուելով մէկին այդքան է ընկնում։ Ի հարկէ կան շատ աշակերտ-ուհիներ, որոնք երբեք առանց յարգելի պատճառի չեն բացակայում, կամ ուշանում։



| Կենտր. դ. | փոխադր. | մնում, | վերաքնն. | արձակ. |
|---|---|---|---|---|
| Բ դ. | 16 | 5 | 1 | — |
| Գ դ. | 8 | 4 | — | 1 |
| Դ դ. | 12 | — | — | — |
| Ե դ. | 5 | — | — | — |
| Զ դ. | 5 | — | | — |
| | 46 | 9 | 1 | 1 |
| համագում. դպր. | 226 | 159 | 6 | 9 |

9 հոգի արձակելու վճիռը Մանկավարժական ժողովը ստիպուած էր տալ։ Արձակուածները գլխաւորապէս երեք-չորս տարի նոյն դասարանում մնացողներ, վերին աստիճանի դպրոց անկարգ յաճախողներ, վատ վարքի տէր և անուղղայ աշակերտներ են եղել։ Այդպիսիների տեղը դպրոցը չէ կարող համարուել, այլ ուղղիչ ապաստանները և յետադէմների ու տկարամիտների յատուկ վարժարանները։ Մարգարէ չպիտի լինել այժմից գուշակելու համար, որ նրանք իրանց յարմար «ապաստանը» պիտի գտնեն։

## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Մանկավարժական ժողովների լուրջ խորհրդակցութեան առարկայ դարձել է նաև սաների ընթերցանութեան գործի կարգաւորումը։ Դպրոցական գրադարանի՝ սաների ընթերցանութեան յարմար դատուած գրքերը բաժանուել են դասարանների համեմատ և կազմուել են յատուկ ցուցակներ։ Այս ցուցակների համեմատ՝ դասատուները գրադարանապետից վերցրել են որոշ քանակութեամբ գրքեր և ապա բաժանել են իրանց դասարանի սաներին։

Այստեղ ոմանք կարծում են, որ ընթերցանութեամբ պարապելը, եթէ ոչ աւելորդ, գէթ անկարևոր մի զբաղմունք է, սակայն այդպիսիները աններելի սխալ են կատարում՝ գաղափար չունենալով ընթերցանութեան զարգացնող ու դաստիարակող դերի մասին։ Կանոնաւոր ղեկավարուած ընթերցանութիւնը երբեք արգելք չէ հանդիսացել դասերը կանոնա-

ւոր պատրաստելուն, այլ ընդհակառակը դասի գիտակցական իւրացման համար ծառայել է իբրև հիմունք։ Նկատուած է, որ ընթերցանութեամբ համեմատաբար մեծ չափով զբաղւում են աւելի յառաջադէմները. ծոյլ ու անընդունակ աշակերտները ընթերցանութեամբ էլ, համարեա, չեն պարապում։

Դպրոցական գրադարանից ընթերցանութեան գրքեր ստացել են բարձր դասարանների աշակերտ-ուհիները (Գ բաժանմունքից — Զ դասարան)։

| | Ընթերց. պարապում են | Քանի կտոր գիրք է կարդացուել | Իւրաքանչիւրը քանի կտոր գիրք է կարդացել (միջին թւով) |
|---|---|---|---|
| Գ.-Քան. դ. | 131 աշակ. | 867 | 6,5 |
| Ս. Կատ. դ. | 59 » | 597 | 10 |
| Կենտր. դ. | 56 » | 652 | 12,5 |
| | 246 | 2116 | 10 |

Այս թուերը ցոյց են տալիս, որ ամենից աւելի Կենտրոնական դպրոցի սաներն են ընթերցանութեամբ պարապում, ապա՝ Ս. Կատարինեան, ամենից քիչ՝ Գ.-Քանանեան. համեմատելով ընդհ. յառաջադիմութեան հետ՝ կը տեսնենք, որ ընթերցանութիւնը ուղիղ յարաբերական է դպրոցների սաների ընդհ. յառաջադիմութեանը, որը այս կարգով էր՝ Կենտրոնական, Ս. Կատարինեան և Գ.-Քանանեան։ Ուրեմն թուերն էլ ցոյց են տալիս, որ ընթերցանութեամբ պարապելը ոչ մի ձևով արգելք չէ հանդիսացել դասեր պատրաստելուն։ Նկատելի է, որ ընդհանրապէս քիչ գիրք է կարդացուած — իւրաքանչիւր աշակերտի մօտաւորապէս ամսէն մի գրքի ընթերցում է ընկնում, որ շատ քիչ է, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ կարդացած գրքերի մեծ մասը փոքրիկ, մի քանի տասնեակ էջերից բաղկացած գրքոյկներ են եղել։

Յիշենք նաև, որ գրադարանի բարեկարգման ու ճոխացման համար՝ «Ա.շ. Միութեան» հաշուին մասամբ արդէն բերել են տրուած և պիտի պատուիրուեն մօտ 60 թումանի գրքեր։ Կազմել է տրուած 240 կտոր գիրք։



## ՁԱՅՆԱԿԱՆ ՈՒ ԳՈՐԾԻԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Այս տարի էլ դպրոցներս ունեցել են երգեցիկ ու նուագող խմբեր։ Երգեցիկ խումբը, որ բաղկացած է եղել մօտ 120 հոգուց, Ա. Գերասիմեանի ղեկավարութեամբ հանդէսներին ու երեկոյթներին երգել է զանազան վեցաձայն, հնգաձայն, քառաձայն և այլ երգեր՝ հայ և մասամբ օտարազգի նշանաւոր երաժիշտների գործերից։ Կիւրակէ օրերին Ս. Ամենափրկչեան վանքի տաճարում և մի քանի տօն օրերի տեղւոյս թաղական եկեղեցիներում խումբը երգել է Մ. Եկմալեանի՝ քառաձայն խմբի համար պատրաստուած պատարագի վարիանտը՝ որոշ կտորներ վերցնելով նաև միւս վարիանտներից։

Փողաւոր նուագարանների նուագախումբը պ. Մ. Կարապետեանի ղեկավարութեամբ՝ հանդէսներին ու ներկայացումներին նուագել է զանազան կտորներ, որոնց կատարման մէջ եղած յառաջադիմութիւնը նկատելի է։ Սակայն երաժշտական խումբը միանգամայն կանոնաւորելու համար՝ անհրաժեշտ է մտածել պակասող ու անհրաժեշտ նուագարանները ձեռք բերելու մասին։ Այս հանգամանքի վրայ էլ հրաւիրում ենք դպրոցներիս Պատ. Հոգաբարձութեան լուրջ ուշադրութիւնը։ — Մօտ 5-6 աշակերտներ էլ այս տարի շարունակել են պ. Մ. Կարապետեանի մօտ ջութակ սովորել։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ
## ԵՒ
## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

ա) Դպրոցներիս ուսուցչական կազմն ու աշակերտութիւնը «Գ.-Քանանեան» դպրոցի մեծանուն և անմահ նուիրատու հանգուցեալ Գ. Քանանեանի յիշատակը յարգելու համար՝ ամբողջ կազմով ներկայ է եղել Ս. Գէորգ զօրավարի տօնի առթիւ մատուցուող Ս. Պատարագին, որից յետոյ կատարուել է հոգեհանգստեան կարգ։

բ) Ուսուցչական կազմն ու Ս. Կատարինեան դպրոցի աշակերտուհիները՝ Ս. Կատարինեան որ. դպրոցի երախտաւոր հիմնադիր ու բարերար հանգուցեալ Մ. Յորդանանեանի պանծալի յիշատակը յարգելու համար՝ ներկայ են եղել «Բտռասուն մանկանց» տօնի առթիւ Ս. Կատարինեան կուսանաց մենաստանում մատուցուող Ս. Պատարագին ու հոգեհանգստեան արարողութեան:

գ) Դպրոցներիս ուսուցչական կազմն ու աշակերտութիւնը ներկայ է եղել Կենտրոնական և Արհեստագիտական դպրոցների մեծանուն բարերար Աբգարեանց տօնի առթիւ Ս. Աստուածածին եկեղեցում մատուցուող Ս. Պատարագին և հոգեհանգստեան արարողութեան:

Ներկայ ուսումնական տարում Մանկավարժ. Խորհուրդի նախաձեռնութեամբ կազմուել են հետևեալ երեկոյթներն ու հանդէսները.

ա) Նոր տարուայ երեկոյթ, որը հիանալի տպաւորութիւն է թողել հասարակութեան վրայ իւր ճոխ բովանդակութեամբ և մտածուած կազմակերպութեամբ: Առանձնապէս ուշագրաւ էր Կենտր. դպրոցի միջին դասարանների աշակերտների ներկայացրած երկու արարուածով անգլերէն կատակերգութիւնը (Պընչ ան՛դ Ջիւդի):

բ) Բարեկենդանի ներկայացում, որի կազմակերպութեան գործը յանձնուած էր «Աշ. Միութեան», այս ներկայացումն ունեցաւ միջակ յաջողութիւն: Աշակերտներից մի քանիսն իրանց գովելի ու մտածուած խաղով ուշադրութիւն գրաւեցին:

գ) Գարնան տօն ու ծառատնկութիւն: Այս հանդէսը որ կատարուեց դպր. ուսուցչական կազմի և աշակերտութեան մասնակցութեամբ մարտ 7-ին, 1912, թողեց անջնջելի և խորին տպաւորութիւն՝ թէ աշակերտութեան և թէ հասարակութեան վրայ: Հանդէսը իր անսովոր բնոյթի շնորհիւ դէպի ինքն էր գրաւել, համարեա, տեղւոյս ազ-



գաբնակութեան բոլոր խաւերին: Հազարաւոր հետաքրքրուողների, ամբոխի ուղեկցութեամբ աշակերտութիւնը դրօշակներով, թարմ ճիւղերով, դպրոցներիս երաժշտական խմբի նուագով՝ կարգով յառաջ շարժուեց դէպի վանքապատկան «Նորաշէն» անտառը: Մի քանի երգերից ու երաժշտութիւնից և հանդէսի նշանակութիւնը բացատրող մի հակիրճ բանախօսութիւնից յետոյ՝ պրոցեսիան շարժուեց դէպի այն անտառամասը, որը սահմանուած էր ծառատնկութեան համար: Հրճուանքն աննկարագրելի էր: Մէկ ժամուայ մէջ մօտ 900 ծառեր տնկուեցան աշակերտների ձեռքով:

Ծառատնկութեան հանդէսի նշանակութիւնը ահագին է. Նա հոգեկան հրճուանքի ու կենսուրախութեան մի թարմացնող աղբիւր է: Նա վարժեցնում է երեխաններին աշխատանքի, գործակցութեան, ամրացնում է նրանց մէջ սէր դէպի բնութիւնը, բուսականութիւնն ու երկրագործական աշխատանքները:

Ռուս մանկավարժական թերթերի տեղեկութիւններից երևում է, որ այս հանդէսը լուրջ կերպով սկսել է զբաղեցնել ոչ միայն դպրոցական, այլև քաղաքային Վարչութիւններին, որոնք լրջօրէն մտածում են ծառատնկութեան հանդէսի համար տեղի որոշման և այլ յարմարութիւնների հայթայթման մասին:

դ) Թեմիս Գերապատիւ Առաջնորդ Տ. Սահակ Արքեպ. Այվատեանի տօնի առթիւ՝ հանդէս Առաջնորդարանում: Հանդէսին դպր. ուսուցիչներից Արմ. Տէր-Գէորգեան քհնյ. Կիրակոսեանը մի հակիրճ շնորհաւորական ճառ արտասանեց: Նոյն բովանդակութեամբ մի բանախօսութիւն կարդացւեց աշակերտութեան կողմից. երգուեցան մի քանի ազգային երգեր: Գերապ. Առաջնորդը աշակերտութեան հիւրասիրեց քաղցրաւէնիքով, իսկ ուսուցչական կազմին՝ Հոգաբարձութեան հետ միասին՝ պատուեց ընթրիքով: Ուսուցչական խմբի կողմից իբրև շնորհակալութեան և շնորհաւորու-

թեան հաւաստեաց նշան՝ Գերապ. Առաջնորդին մատուցուեց 5 կտոր արծաթեայ տեղական ձեռագործի թանգարժէք իրեր։

ե) **Ընդունելութեան հանդէս**: Լոնդոնի պարսկասէրների կոմիտէի նախագահ Լորդ Լեմինգտոնին, որը Պարսկաստան գալով՝ հետաքրքրուել էր նաև հայերի կրթական և այլ վիճակներով, դպրոցներիս հոգաբարձութիւնն և ուսուցչութիւնն ընդունեցին Գ.-Քանանեան դպրոցի դահլիճում շնորհաւորական հանդէսով։ Դպրոցներիս կողմից կարդացւեց մի ուղերձ անգլերէն լեզուով, որին յարգելի Լորդը պատասխանեց շնորհակալական ու գովասանական մի ընդարձակ ճառով։ Շատ լաւ տպաւորութիւն ստացաւ «Լօ լօ» հայկական քառաձայն երգից (Կոմիտաս վ.) և շատ գոհ մնաց դպրոցական երաժշտական խմբի նուագից։

Գոհ սրտով հեռանալով իրան առաջնորդող դոկտոր Մ. Ագանուրի հետ՝ խոստացաւ գրքեր ուղարկել դպրոցներիս գրադարանի համար։ Ապա պտտեց ու տեսաւ տեղւոյս ազգային բոլոր հաստատութիւնները։

զ) **Տարեվերջի ակտի սոյն հանդէսը**, ուր նիւթական և ուսումնական մասի տեղեկագրներն են կարդացւում, պիտի լինեին ատենախօսութիւններ, երաժշտութիւն, երգեցողութիւն. պիտի կատարուէր աւարտական վկայականների բաշխում եւայլն։

## ԳՐԱՒՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Այս տարի գրաւոր աշխատանքներին շատ մեծ տեղ է տրուել։ Ա դ.—Զ դ. ունեցել են բազմաթիւ դասարանական գրաւոր աշխատանքներ լեզուներից, պատմութիւնից, մաթեմաթիքական առարկաներից, բնապատմութիւնից, բնագիտութիւնից եւայլն։ Տրուած գրաւոր աշխատանքները գրուած են յատկապէս պատրաստուած ու տպագրըւած ֆորմերի վրայ։ Բոլոր դասարանների իւրաքանչիւր



առարկայի ամեն անգամուայ գրաւոր աշխատանքներից ընտրուած են 2—3 օրինակ, որոնք կազմել պիտի տրուին ու պահուին։

## ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մանկավարժ. Խորհ. սկզբունքով միանգամայն դէմ է եղել աւանդական, ձեւական քննութիւններին։ Կուրսի ամբողջացման, ու կրկնողութեան նպատակով և դասարանի յառաջադիմութեան ընդհ. պատկերը հասկանալու համար՝ տեղի են ունեցել պարզ հարցաքննութիւններ Զ դասարանի բոլոր առարկաներից և Ե դասարանում աւարտող 5 առարկաներից։ Հարցաքննութեանց արդիւնքն ընդհանուր առմամբ գոհացուցիչ ու գովելի է եղել։ Հարցաքննութիւններն երբեք չունենալով զուտ պաշտօնական և ճնշիչ բնոյթ՝ որեւէ յոռի ազդեցութիւն չեն ունեցել աշակերտութեան վրայ։

Հարցաքննութիւններին ներկայ է եղել դպրոցների տեսուչն և ուսուցիչներից երկու ընթերականեր. յաճախ ներկայ է եղել նաև հոգաբարձութեան փոխ-նախագահ արժանապատիւ Տէր-Կարապետ քհնյ Թումիկեանը, այլ և Հոգաբարձութեան կողմից դոկտ. Մ. Ռանդոլֆ։

Հարցաքննութիւններ եղել են հետեւեալ առարկաներից՝

Զ դասարան

1. Հայերէն
2. Անգլերէն
3. Ֆրանսերէն
4. Պարսկերէն
5. Ալգեբրա
6. Երկրաչափութիւն
7. Տոմարակալութիւն
8. Ընդհ. պատմութիւն
9. Հայ. գր. պատմութ.
10. Ֆիզիկա
11. Մանկավարժութիւն
12. Քիմիա

Ե դասարան

1. Հայ. պատմութիւն
2. Բնահիւս. տեսութիւն
3. Անգլիայի պատմութիւն
4. Անգլ. և Հնդկ. աշխարհ.
5. Թուաբանութիւն

Հարցաքննութեանց պատրաստուելու համար Զ դասարանի աշակերտ-ուհիներին մայիս 1-ից արձակուրդ է տրուել։

## ՄԻԱՑԵԱԼ ԴԱՍԵՐ

Համաձայն անցեալ ուսումն. տարեշրջանի Մանկավարժական և Հոգաբարձական ժողովների որոշման՝ այս տարի Ս. Կատարինեան և Կենտրոնական դպրոցների Գ, Դ, Ե և Զ դասարանների դասերի մի մասը (մօտ 12—14 դաս) եղել է միացեալ։ Այդ դասերին Կենտր. դպրոցի աշակերտները գնացել են Ս. Կատ. դպրոց։ Հնարաւոր չէ եղել բոլոր առարկաները միացեալ աւանդել՝ շնորհիւ այն հանգամանքի, որ տարիների ընթացքում երկու դպրոցների աշակերտ—ուհիների անցած կուրսերի մէջ կային զգալի տարբերութիւններ։ Այսպէս՝ այս տարի անհնարին եղաւ միացնել մի քանի դասարանների անգլերէնը, երկրաչափութիւնը, ալգեբրան և մի քանի ուրիշ առարկաներ։ Հաւանականաբար միւս տարի հնարաւոր պիտի լինի առանձին աւանդուող դասերի մի մասն էլ կրկին միացնել, որով դպրոցները շահած պիտի լինին նաև նիւթական կողմով։ Միշտ կրկնել ենք—թողնելով մի կողմ ամեն մանկավարժական նկատում՝ նիւթական նկատումով իսկ աններելի սխալ է իւրաքանչիւր 6—8 աշակերտի համար ջոկ-ջոկ դասարաններ պահել։ Միացած դասաւանդումը աշակերտութեան բարքերի վրայ ունեցել է կրթիչ ազդեցութիւն՝ մեղմացնելով տղաներին յատուկ շատ բրտութիւններ և տեղւոյս աղջիկներին յատուկ արևելեան ծայրայեղ ու սխալ ըմբռնուած ամաչկոտութիւնը։ Քաղաքավարութիւն, պարկեշտութիւն, փոխադարձ խելացի ու յարգալից վերաբերում—ահա միացեալ դասաւանդման դաստիարակիչ կողմը, որն ամենուրեք դիտուած, ամեն բանիմաց դաստիարակի կողմից ընդունուած, ուսուցիչների երկար տարիների փորձառութեամբ և մասնաւորապէս մեր կողմից սոյն ուսումնական տարեշրջանում նկատուած է։ Հա-



սարակութեան վերաբերմունքն էլ այս խնդրում եղել է գովասանքի ու շնորհակալութեան արժանի։

Մանկավարժ. Խորհուրդն ընդհանրապէս շնորհակալ է դէպի ինքն ունեցած վստահութեան համար և յուսով է, որ պիտի կարողանայ դաստիարակութեան վսեմ գործի իդէալների և հասարակական հասուն ու խելացի պահանջների խորհուն արտայայտիչը լինել։

## ԸՆԹԱՑԱՒԱՐՏՆԵՐ

Այս տարի Ս. Կատարինեան և Կենտր. դպրոցների Զ դասարաններն աւարտում են 11 հոգի՝ 6 աղջիկ և 5 տղայ։ Ս. Կատ. դպրոցի Զ դասարանում մնում է 1-ը։

Աւարտում են՝

1. Աբրահամեան Աստղիկ՝ գով. (Բ կարգի) յառ. և յոյժ գով. վրք.
2. Աղանեան Մարիամ՝ միջ. (Գ կարգի) » » » »
3. Դաւիթխանեան Ագապիա՝ գով. (Բ կարգի) » » » »
4. Խաչիկեան Մէրի » » » » » » »
5. Մկրտչեան Պալասան » » » » » » »
6. Սիմէօնեան Համասփիւռ » » » » » » »
7. Ադամեան Աբրահամ » » » » » » »
8. Անդրէասեան Մինաս միջ. (Գ կարգի) » » » »
9. Գասպարեան Ռաֆայէլ » » » » » » »
10. Յովսէփեան Հայկ գով. (Բ » ) » » » »
11. Ստեփաննոսեան Ստեփան » (Բ » ) » » » »

Ընթացաւարտները ներկայացրել են աւարտական հետևեալ շարադրութիւնները.

1. Աբրահամեան Ա..—Գ. Արծրունին իբրև հրապարակախօս
2. Աղանեան Մ. —Մխիթարեան միաբանութիւն
3. Դաւիթխանեան Ա..—Ռ. Պատկանեանն իբրև ժող. երգիչ
4. Խաչիկեան Մէրի —Մ. Թաղիադեան ու նրա գրակ. գործ.
5. Մկրտչեան Պ. —Մխիթարեան միաբանութիւն
6. Սիմէօնեան Հ. —Սիամանթօյի «Հոգեվ. և յոյսի ջահեր»
7. Ադամեան Աբր. —Ֆիզիքական դաստիարակութիւն
8. Անդրէասեան Մ. — Խ. Աբովեան
9. Գասպարեան Ռ. —Վերածնութեան դար
10. Յովսէփեան Հ. —Խ. Աբովեան
11. Ստեփաննոսեան Ս.—Ֆիզիք. դաստիարակութիւն

Ի վերջոյ, յարգելի ծնողներ, ահա ձեր ծոցից մեզ յանձնուած 11 զաւակներ, որոնք տարիներ շարունակ դաստիարակուեցին, կրթուեցին, հարստացրին իրանց միտքը գիտելիքներով և իրանց սիրտը՝ մաքուր զգացումներով, ձեռք բերին կեանքի համար անհրաժեշտ հմտութիւններ ու հիմք դրին իրանց կազմակերպուող բնաւորութեան, որքան թոյլ էին տալիս մեր—ուսուցիչներիս ուժերն ու տեղական հասարակական նիւթական և այլ պայմանները։ Նրանք ձերն են և ձեզ համար։ Թէրևս նրանց փոքրիկ ուժերն ու մաքուր հոգիները մռայլ ու բարոյական խաւարի մէջ կարողանան թափանցել իբրև լուսատու մի ճառագայթ։

Իսկ Ձեզ, մեր սիրելի սաներ, երկու խօսք ունինք ասելու. քաջացէք՝ կեանքի ասպարէզ ելնելով. թող ձեր մէջ արթուն լինին հասարակական բարձր ու մարդկային վսեմ զգացումները։ Կարող էք սայթաքել, բայց երբեք չընկնելու բարոյական զօրութիւնն ունեցէք։ Գնացէք ժողովրդի մէջ, օգտակար եղէք նրան, որքան Ձեր փոքրիկ, բայց աստիճանաբար կատարելագործուելու ձգտող ուժերը կը թոյլատրեն։ Ձգտեցէք հասարակական մեքենայի մէջ մեքենավարը դառնալ, և ոչ անկամ ու անմիտ մասնիկը հօկայ կառուցուածքի։

Իսկ թող իմ վերջին խօսքը լինի Ձեզ համար— եղէք չիտակ ու պարտաճանաչ քաղաքացիներ և ազգի հաւատարիմ որդիներ։

---

Վերջացնելով խօսքս՝ պարտք եմ համարում յայտնել խորին շնորհակալութիւնս դպր. Պատուարժան Հոգաբարձութեան գերապատիւ նախագահ Տ. Սահակ արքեպ. Այվատեանին, Նրա տեղապահ—նախագահ արժանապատիւ Տէր-Կարապետ քհնյ Թումիկեանին և միւս մեծարգոյ անդամներին՝ իրանց ուշադիր հոգացողութեան և Ուսումնական Վարչութեանն ցոյց տուած պատրաստակամ վերաբերմունքի համար։



Շնորհակալութիւն՝ նաև իմ պաշտօնակից ուսուցիչուսուցչուհիներին, որոնք բարեխիղճ ու համերաշխ աշխատութեամբ և նուաստիս լծակցութեամբ տարան դպրոցական վսեմ գործը։

Տեսուչ դպրոցների՝ Ա. ԳԵՐԱՍԻՄԵԱՆ

18 յունիսի, 1912 թ.
Ջուղա—Սպահան.

Ծանօթ.— Ցաջորդ էջից զետեղուած է դպրոցներիս ու մանկապարտէզի սաների ընդհանուր վիճակացոյցը, որը դժբախտաբար տպարանական անյարմարութիւնների պատճառով հնարաւոր չեղաւ լիովին տպագրել (բոլոր դասարաններինն առանձին-առանձին), այդ պատճառով ստիպուած եղանք բաւականանալ մանկապարտէզի և երեք դպրոցների համագումար վիճակացոյցներով:

Ա. ԳԵՐ.

| Դպրոցներ | աշակերտների թիւը | | | | | աշակերտների տարիքի միջին թիւը | Քանի՞սն ունին ծնողներ | % | Քանի՞սն են որբ (մայրից, հայր կամ երկուսը) | % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | աշակերտների ընդհանուր թիւը | տղաների թիւը | % | աղջիկների թիւը | % | | | | | |
| Մանկապ. | 95 | 40 | 42 | 55 | 58 | $5^1/_2$ | 90 | 94,75 | 5 | 5,25 |
| » Ա. գ. | 50 | 25 | 50 | 25 | 50 | | | | | |
| | 145 | 65 | | 80 | | | | | | |
| Դ.-Բանան. | 284 | 144 | 50,75 | 140 | 49,25 | 10,25 | 194 | 61,5 | 90 | 38,5 |
| Ս. Կասար. | 59 | — | — | 59 | 100 | 15 | 44 | 74,5 | 15 | 25,5 |
| Կենտրոնակ. | 57 | 57 | 100 | — | | 15,5 | 44 | 77 | 13 | 23 |
| համագումար | 400 | 201 | 50,25 | 199 | 49,75 | $13^2/_3$ | 282 | 70,5 | 178 | 32 |

(շարունակ.)



| Ծնողների | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանի՞սի ծնողքն է հողագործ | % | Քանի՞սի ծնողքն է ուսուցիչ | % | Քանի՞սի ծնողքն է վաճառական | % | Քանի՞սի ծնողքն է արհեստաւոր | % | Քանի՞սի ծնողքն է պաշտօնեայ | % | Քանի՞սի ծնողքն է զինուորական | % |
| 5 | 5,25 | 4 | 4 | 4 | 4 | 28 | 30,25 | 10 | 11 | 10 | 11 |
| 11 | 3,75 | 5 | 1,75 | 12 | 4 | 63 | 21,75 | 16 | 5 | 22 | 7,25 |
| 8 | 14 | 2 | 3,5 | 2 | 3,5 | 11 | 19 | 4 | 7 | 4 | 7 |
| 3 | 4,5 | 1 | 1,75 | 2 | 3,5 | 14 | 24,75 | 4 | 7 | 8 | 15 |
| 22 | 5,5 | 8 | 2 | 16 | 4 | 58 | 22 | 24 | 6 | 34 | 8,5 |

(շարունակ.)

| Զ Բ Ա Ղ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանիսի՝ հայրն է երկրագործ | % | Քանիսի՝ հայրն է մշակ (օրավարձով) | % | Քանիսի՝ հայրն է ծառայ | % | Քանիսի՝ հայրն է գինեվաճառ | % | Քանիսի՝ հայրն է անգործ, կամ ուրիշ պարապմունքի | % |
| 4 | 4 | 5 | 5,25 | 16 | 16,25 | 1 | 1 | 8 | 8 |
| 9 | 3 | 21 | 7 | 46 | 16,25 | 10 | 3,5 | 69 | 26,75 |
| — | | — | | 5 | 9 | 2 | 3 | 20 | 34 |
| 4 | 7 | 1 | 1,75 | 5 | 8,75 | 4 | 7 | 11 | 19 |
| 13 | 3,25 | 22 | 5,5 | 56 | 14 | 16 | 4 | 100 | 25 |

(շարունակ.)



| Ծնողների գրագիտութ. | | | | Նիւթական վիճակ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանիսի՝ հայրն է գրագէտ | % | Քանիսի՝ մայրն է գրագէտ | % | Քանի՞սն են հարուստ | % | Քանի՞սն են միջակ | % | Քանի՞սն են չքաւոր | % |
| 74 | 78 | 76 | 80 | 8 | 8,5 | 44 | 46 | 16 | 17 |
| 153 | 53,75 | 166 | 58 | 9 | 3,2 | 98 | 34,5 | 110 | 38,5 |
| 49 | 83,25 | 46 | 78 | 3 | 5 | 32 | 54,5 | 16 | 27 |
| 46 | 80,75 | 19 | 33,25 | 5 | 8,75 | 27 | 47,5 | 18 | 31,5 |
| 248 | 52 | 231 | 55,25 | 17 | 4,25 | 157 | 39,25 | 144 | 36 |

(շարունակ.)

| Դպրոցներ | Նիւթական վիճակ (չափ.) | | Բռնակալութիւն | | | | Նպաստ ստացողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Քանի՞սն են աղքատ | % | Քանի՞սն են բռնակալու | % | Քանի՞սն են ձրիավարժ | % | Քանի՞սն են ձրիաբ. զգեստ ստանում | % | Քանի՞սն են ձրիաբ. դաս. պիտ. ստանում | % |
| Մանկապ. | 28 | 28,5 | 47 | 49 | 48 | 50 | 32 | 33,5 | 95 | 100 |
| Գ.-Բանանի | 67 | 23,8 | 86 | 30,2 | 198 | 69,8 | 155 | 55 | 167 | 58,7 |
| Ս. Կաստր. | 8 | 13,5 | 35 | 59,25 | 24 | 40,75 | 16 | 27 | 18 | 30,5 |
| Կենտրոնակ. | 7 | 12,5 | 24 | 42 | 33 | 58 | 24 | 42 | 31 | 57,5 |
| Համագումար | 82 | 20,5 | 145 | 36,25 | 255 | 63,75 | 195 | 48,75 | 216 | 54 |

(շարունակ.)



| Երբեւէկ ու փեռերոքիկ | | | | ուշեղացի | | | | Առողջական | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանի՞սն են երբեւէկ | % | Քանի՞սն են փեռերոքիկ | % | Քանի՞սն են ջուղայեցի | % | Քանի՞սն են օտար վայրերից | % | Քանիսի՞ առողջութիւնն է լաւ | % | Քանիսի՞ առողջութիւնն է միջակ | % |
| 95 | 100 | — | — | 84 | 88,5 | 11 | 11,5 | 53 | 55,5 | 35 | 37 |
| 271 | 95,3 | 13 | 4,7 | 227 | 80 | 57 | 20 | 203 | 71,5 | 71 | 25 |
| 59 | 100 | — | — | 53 | 89 | 6 | 11 | 55 | 93,25 | 4 | 6,75 |
| 41 | 72 | 16 | 28 | 31 | 57,5 | 26 | 42,5 | 47 | 82,5 | 9 | 16 |
| 371 | 93, | 29 | 7,6 | 311 | 77,75 | 89 | 22,25 | 305 | 76,52 | 84 | 21 |

(շարունակ.)

| Ընդհանուր վիճակ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանիսի՞ առողջութիւնն է թոյլ | % | Ուսումն. տարում քանի՛ հոգի են հիւանդացել | % | Հիւանդութեան քանի՞ դէպք է եղել | միջին թուով օրական քանի՛ ժամ են քնում | Քանիսի՞ ծաղիկն է պատուաստած | % | Քանիսի՞ ծաղիկը չէ պատուաստած | % |
| 7 | 7,5 | 46 | 51 | 74 | 10 | 75 | 89 | 20 | 11 |
| 10 | 3,5 | 230 | 81 | 487 | 8,5 | 227 | 80 | 57 | 20 |
| — | — | 40 | 67,75 | 67 | 7,75 | 52 | 88 | 7 | 12 |
| 1 | 1,5 | 32 | 57,75 | 35 | 8 | 53 | 93 | 4 | 7 |
| 11 | 3,5 | 302 | 75,5 | 589 | 8 | 332 | 83 | 68 | 17 |

(շարունակ.)



| Ընթերցանութիւն | | | | Տնային աշխատանք | | Յառաջադիմութիւն | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քանի՞սն են ընթերցանութ. պարապում | % | Իւրաքանչ. քանի՞ գիրք է կարդացել (միջին թիւ) | Ամբողջ դպրոցը քանի՛ կտոր գիրք է կարդացել | Քանի՞սն են տնային աշխատանք կատար. | % | Քանիսի՛ տար. յառ. նիշերի միջին թիւն է լաւ | % | Քանիսի՛ տար. յառ. նիշերի միջին թիւն է միջակ | % |
| — | — | — | — | — | — | 45 | 47,25 | 36 | 38 |
| 131 | 46 | 6,5 | 867 | 203 | 71,4 | 53 | 18,7 | 130 | 46,5 |
| 59 | 100 | 11 | 597 | 58 | 98 | 20 | 33,75 | 30 | 56,75 |
| 56 | 98,25 | 12,5 | 652 | 43 | 75,5 | 28 | 49 | 21 | 37 |
| 246 | 61,5 | 10 | 2116 | 304 | 76 | 101 | 25,25 | 181 | 45,25 |

(շարունակ.)

| յառաջադիմութիւն (շար.) | | | վարք | | յիշողութիւն | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| քանիսի՝ սար. յառ. նիշերի միջին թիւն է լաւ | % | մէկ աշակերտի միջին թուով ի՛նչ նիշեր են ընկնում: քանիսի՝ լաւ, միջակ, վատ | քանիսի՝ վարքն է լաւ | % | ք. նիսի՝ յիշողութիւնն է լաւ | % | քանիսինը՝ յիշողութիւնն է միջակ | % | քանիսինը՝ յիշողութիւնն է վատ | % |
| 14 | 14,25 | | 95 | 100 | 47 | 50 | 31 | 32 | 17 | 18 |
| 101 | 54,8 | 2 լաւ, 4 միջ., 4 թոյլ | 268 | 94,3 | 51 | 18 | 136 | 48 | 97 | 34 |
| 9 | 15,5 | 4,25 լ., 4,5 մ., 2,25 թ. | 58 | 100 | 32 | 54,5 | 20 | 34 | 7 | 11,5 |
| 8 | 14 | 6 լաւ, 4,5 միջ., 1,5 թ. | 55 | 95 | 26 | 45,75 | 23 | 40,25 | 8 | 14 |
| 118 | 29,5 | 4 լաւ, 4,25 միջ., 2,75 թ. | 381 | 95,25 | 109 | 27,25 | 179 | 44,75 | 112 | 35,5 |

(շարունակ.)



| ջանասիրութիւն | | | | | | ուշադրութիւն | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| քանիսինը՝ ջանասիրութիւնն է լաւ | % | քանիսինը՝ ջանասիրութիւնն է միջակ | % | քանիսինը՝ ջանասիրութիւնն է վատ | % | քանիսինը՝ ուշադրութիւնն է լաւ | % | քանիսինը՝ ուշադրութիւնն է միջակ | % | քանիսինը՝ ուշադրութիւնն է վատ | % |
| 45 | 47,5 | 34 | 35,5 | 16 | 17 | 45 | 47,5 | 32 | 34,5 | 17 | 18 |
| 55 | 19,4 | 107 | 38 | 122 | 49,6 | 57 | 20 | 144 | 51 | 83 | 29 |
| 24 | 40,5 | 29 | 49,5 | 6 | 10 | 23 | 39 | 35 | 59,5 | 1 | 1,5 |
| 25 | 44 | 26 | 45,75 | 6 | 10,25 | 24 | 42 | 28 | 49 | 5 | 9 |
| 104 | 26 | 162 | 40,5 | 134 | 33,5 | 104 | 26 | 207 | 51,75 | 89 | 22,25 |

(շարունակ.)

| բացակայութիւն | | ծանիբերով տարին են նոյն դասարանում | | | | | | համազգեստ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| դասարանի բացակայութեան ընդհ. թիւը | մի աշակերտ միջին հաշուով քանի՞ դասի է բացակայել | քանի՞սն են Ա. տարին | % | քանի՞սն են Բ տարին | % | քանիսն են Գ տարին | % | քանի՞ հոգի համազգեստ ունին | % |
| 4407 | 45 | 67 | 70 | 10 | 10,5 | 18 | 19,5 | | |
| 24784 | 87 | 190 | 80 | 79 | 24 | 15 | 5 | 202 | 71 |
| 2849 | 50 | 54 | 83 | 5 | 17 | — | — | 59 | 100 |
| 1626 | 28,5 | 46 | 80,6 | 11 | 12,5 | — | — | 44 | 77 |
| 29259 | 73 | 290 | 72,2 | 95 | 21,25 | 15 | 3,75 | 305 | 76,25 |





| փ ո խ ա դ ր ո ւ թ ի ւ ն | | | | | | | | աշակերտների ընդհ. թիւը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| քանի՞սն են փոխադրւում | % | քանի՞սն նն մնում | % | քանի՞սն են վերաքննելի | % | քանի՞սն են արձակւում | % | սեպտեմբերին | յունուարին | յունիս 1-ին |
| 62 | 65 | 33 | 35 | — | — | — | — | 10 | 49 | 100 |
| | | | | | | | | 27 | 84 | 145 |
| 136 | 48 | 135 | 47 | 5 | 1,75 | 8 | 3,5 | 259 | 280 | 284 |
| 44 | 76,25 | 15 | 25,5 | — | — | — | — | 58 | 59 | 59 |
| 46 | 80,5 | 9 | 15,5 | 1 | 2 | 1 | 2 | 61 | 57 | 57 |
| 226 | 56,5 | 159 | 39,75 | 6 | 1,5 | 9 | 2,25 | 378 | 396 | 400 |
| Համագում. մանկ. և դպր. | | | | | | | | 405 | 480 | 545 |

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, ԳԷՈՐԳ—ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Ազգ. երկսեռ դպրոցների Հոգաբարձութիւնը 1911—12 ուսումնական տարեշրջանում ամեն շաբաթ իր հերթական ժողովներն ունեցած է, որոնց գլխաւոր նիւթերի մասին համառօտ տեղեկութիւն կուզենք յայտնել Ջուղայի յարգելի հասարակութեանդ:

Հոգաբարձութիւնս արդէն նախորդ ուսումնական տարեշրջանում տեղի ունեցած դպրոցական ակտի հանդիսին յայտնեց, որ Թեմիս Սրբազան Առաջնորդ Գերապատիւ Սահակ Արքեպ. Այվատեանի միջոցաւ բանակցութիւն էր սկսել Թէհրանի Մեծապ. Թումանեան Եղբայրների առեւտրական տան հետ՝ Փէրիա գաւառի 3 հայաբնակ գիւղերի գնման գործը գլուխ բերելու համար:

Այսօր ուրախութեամբ կարող ենք յայտնել, որ յիշեալ բանակցութիւնները յաջող եւ դրական հետեւանք ունեցան:

Սրբազան Առաջնորդի, Մեծապ. Թումանեան Եղբարց նաեւ մեր յարգելի հայրենակից Յովսէփ-խան Ղարախանեանցի ջանքերով երեք հայաբնակ գիւղերը՝ «Խոյգան» «Սանգիբարան» եւ «Բոլորան» գնուեցին Թէհրանում Զէլլէ-Սոլթանի որդի Ջէլալ-Դովլէից:

Հոգաբարձութիւնս այս բարեպատեհ առիթը ձեռքից չտալու համար՝ իր Գերապատիւ Նախագահի, Ջուղայի արժանապ. Քահանաների, մեծապ. Թաղապետների եւ եկեղեցիների Վարչութիւնների հետ կազմած խորհրդակցական ժողովում որոշեց Բոլորան գիւղը վերցնել Ազգ. դպրոցների համար՝ աչքի առաջ ունենալով չնչին տոկոսներով ապահովեցրած մի քանի գումարներ: Գիւղի գնման համար



վճարուած գումարների հաշուին կը տեղեկանանք Հոգաբարձութեան գանձապահի կարգադրած հաշիւներից:

Հոգաբարձութիւնս ուրախ է յայտնելու, որ այժմ Բոլորանի 5 դոնգն պատկանում է Ազգ. երկսեռ դպրոցներին, իսկ 1 դոնգն՝ հոգեւոր Դպրանոցին:

## ԲՈԼՈՐԱՆ ԳԻՒՂԻ ԱՐԴԻՒՆՔՆ ԵՒ ԹՈՇԱԿԱԴՐԱՄ

Բոլորան գիւղի նախորդ տարուայ զուտ արդիւնքն եղաւ՝ ծախսն հանելով՝ 1600 թուման: Բացի այս Բոլորանում մնում է գիւղացիներին փոխարինաբար տրուած 500 լիտր ցորեն ու գարի, որը ներկայ տարուայ տուրքի հետ միասին կստացուի: Հաշուելով՝ գիւղի համար վճարուած գումարը $^{0}/_{0}$22 տոկոս է բերած:

Հոգաբարձութիւնս նախորդ դպրոցական ակտին կարդացած տեղեկագրում յիշել էր, որ դպրոցներիս տնտեսական վիճակը բարեփոխելու համար՝ ի թիւս այլ միջոցների՝ նաեւ թոշակի դրութիւնը հաստատել է: Թէեւ սկզբում քիչ դժուարութեամբ, բայց այս տարի ունեւորներն հետզհետէ սովորեցին կանոնաւորապէս վճարել:

Հոգաբարձութիւնս յայտնում է իր շնորհակալութիւնը դպրոցներիս բոլոր թոշակատու ծնողներին ու խնամակալներին, որոնք չեն զլացել իրանց նիւթական օժանդակութիւնը՝ իրանց զաւակաց կրթութեան համար:

Հոգաբարձութիւնս ուրախ է յայտնելու, որ 1910—11 եւ 1911—12 ուսումն. տարեշրջաններում դպրոցների դրամական մուտքն համապատասխան է եղել արուած ծախքերին:

## ԳԷՈՐԳ—ՔԱՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՏՈԿՈՍ

Գէորգ-Քանանեան դպրոցի դրամագլխի տոկոսներն տարեցարի իջնում են: Անցեալ չորս տարիների համար 25 հազար թուման դրամագլխից դպրոցն ստացած է տարե-

կան 1500 թուման տոկոս, իսկ վերջին երկու տարուայ համար՝ տարեկան 1250 թուման, իսկ եկող տարի ստանալու է միայն մի հազար թուման։ Ուրեմն 1500 թուման տոկոսն իջնում է 1000 թումանի։ Այս պատճառով Հոգաբարձութիւնս ժամանակին մանրամասն տեղեկութիւն տրւած է Ազնուափայլ տ. Վառվառէ Քանանեանին, որպէսզի յարգելի տիկինը թոյլատրէ Գէորգ-Քանանեան դպրոցի դրամագլխից որոշ գումար յատկացնել կալուածների գնման, բայց ցարդ նպաստաւոր պատասխան ստացուած չէ։

## ԴՊՐՈՑՆԵՐԻՍ ԲԻՒՋԷՆ

Նոր դասարաններ բացելու և զանազան անհրաժեշտ ծախքերի պատճառով՝ դպրոցներիս բիւջէի վրայ նախորդ տարիներից աւելացած է մի հազար թուման։

## Տ Ե Ս Ո Ւ Չ

Հոգաբարձութիւնս նախորդ ուսումնական տարուայ վերջին ի նկատի ունենալով աւագ-ուսուցիչ պ. Ա. Գերասիմեանի եռանդուն ու գովելի գործունէութիւնը՝ յարմար գտաւ յանձնել նրան դպրոցների տեսչական պաշտօնը, որն և ուրախութեամբ յանձն առնելով իր գործը վարեց ամենայն բարեխղճութեամբ՝ դրա հետ միասին աւանդելով շաբաթական 14 դաս և կատարելով երգեցիկ խմբի ղեկավարութիւնը։

## Զ ԴԱՍԱՐԱՆ

Հոգաբարձութիւնս պ. Տեսչի հետ խորհրդակցելով սոյն ուսումնական տարեսկզբից բացեց երկու վեցերորդ դասարան՝ տղայոց և աղջկանց։ Ուրախ է յայտնելու, որ այժմ 11 աւարտող աշակերտ-աշակերտուհիներ ունէ։

## ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոգաբարձութիւնս՝ դպրոցների համար ներքին կանոնագրութեան անհրաժեշտութիւն զգալով՝ առաջարկեց պ.



Տեսչին՝ ստանձնել դրա կազմելու գործը։ Կանոնագրութիւնը պատրաստելուց և մանկավարժ. ժողովի հաւանութեան ու հաստատութեան դնելուց յետոյ՝ ներկայացրեց Հոգաբարձական ժողովին. պէտք եղած բարեփոխումներն անելուց յետոյ՝ վերոյիշեալ ներքին կանոնագրութիւնը ուղարկուեց Հոգաբ. Գերապատիւ Նախագահին՝ ի հաստատութիւն։

## ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶՊԱՆՈՒՀԻ

Հոգաբարձութիւնս սոյն ուսումնական տարեսկզբում Կովկասից հրաւիրեց օրիորդ Կ. Յարութիւնեանին՝ Գէորգ-Քանանեան մանկապարտէզի համար իբրև մանկապարտիզպանուհի։ Օրիորդն իր հնարաւորին չափ ջանացել է մանկապարտէզը երեխաների համար օգտակար և միևնոյն ժամանակ հաճելի մի վայր դարձնել։

## ՎԻՃԱԿԱԽԱՂ

Հոգաբարձութիւնս՝ Գորգագործարանի Վարչութեան հետ ձեռնարկած 3000 թումանի վիճակախաղը՝ երկրի խառնակութեան և ճանապարհների հաղորդակցութեան անկանոնութեան պատճառով՝ որոշած է յետաձգել մինչ բոլոր դուրս ուղարկուած տոմսերի հաշիւներն ստացուին։

Սոյն համառօտ տեղեկագիրը վերջացնելուց առաջ՝ Հոգաբարձութիւնս պարտք է համարում իր խորին շնորհակալութիւնը և երախտագիտութիւնը յայտնել Թեմիս Գերապատիւ Առաջնորդ Տ. Սահակ Արքեպ. Այվատեանին՝ դպրոցներիս յառաջադիմութեանն և բարգաւաճմանը ցոյց տուած իր եռանդուն աջակցութեան և պատրաստակամութեան համար։

Հոգաբարձութիւնս շնորհակալութիւն է յայտնում նաև յարգելի տեսուչ պ. Ա. Գերասիմեանին և դպրոցներիս ուսուցչական կազմին՝ իրենց բարեխիղճ և եռանդուն գործունէութեան համար։

Անկեղծ շնորհակալութիւն նաև՝ դպրոցներիս բոլոր բարերարներին, որոնց սրտին մօտ լինելով մատաղ սերնդի կրթութեան և դաստիարակութեան վեհ գործը՝ չեն խնայել նիւթական ամեն կարգի օժանդակութիւն։

17 յունիս, 1912 թ.
Ջուղա—Սպահան,

# ՀԱՇԻՒ

Ն.-ՋՈՒՂԱՅԻ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ,

Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Մ. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ

ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԵՒ

ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՃԻՒՂԵՐԻ

1911—1912 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՅ։

## Հաշուեկշիռ Ել-և-մտից Ազգ. Կենդր. Տղայոց, Գէորգ-Քանանեան վասն 1911—12 ուսումն. տարւոյ, ի միոյ

### ՄՈՒՏՔ

| | Ղռան | Սենր | Ղռան | Սենր |
|---|---|---|---|---|
| Առ մին Յուլիսի 1911 թ. պատրաստ | | | 3278 | 85 |
| **Բաթաւիոյ Հայ. Ազգ. Հաստատու. Վարչութիւն** | | | | |
| Ստացուած Բաթաւիոյ Հայ. Ազգ. Հաստատութեան պատուարժան Ատենից ի հաշիւ Կենդր. դպրոցի և նուէր Մ. և Ց. ուսումնարանից առ Ս. Կատարինեան Օր. դպրոցը ռուփիք 4599—7—8 | | | 16098 | 20 |
| **Ստացուած նպաստներ** | | | | |
| Մեծ. պ. Ալթ Պօղոսեանի մի ամսոյ 1912 թուի 200 անգլ. ոսկու նպաստը | 10700 | | | |
| Սինկափուրայ Մեծ. Սանփանինոս Պօղոս և Ընկ. 27—2 անգլ. ոսկու նպաստը պ. պ. Եսայի Սարգիս և Ընկ. միջոցաւ | 1416 | | | |
| Կրթական-Գրական Ընկ.-ից դպրոցներիս երաժշտական խմբի համար | 339 | | | |
| պ. պ. Թադդէոս Մինասեանից և Արմէն Սանփանինոսեանից «Պղծիրեան Գիտական—Հրատարակչական Ֆոնդի» հաշուին | 117 | | | |
| Ս. Ամեն. Վանքից դպրոցներիս երգեցիկ խմբի 1911 և 1912 ամաց համար | 480 | | | |
| Ասլէտ Դալի Ռոստամի ներկայացումից | 682 | 65 | 13734 | 65 |
| **Ներկայացումներ** | | | | |
| Ստացուած Մանկական երեկոյթից | 506 | | | |
| » Թաֆֆի քլուբի և Մարգարանի վարչութիւնների ներկայացումից ի հաշիւ | 102 | | 608 | |
| **Բոլորան և Ջիգան գիւղեր** | | | | |
| Ստացուած այն դպրոցապատկան գիւղերի 1911 թուի արդիւնքը— ցորենի և գարու գին | | | 31905 | 60 |
| **Ս. Կատ. Օր. Դպրոց** | | | | |
| Ստացուած Կալկաթայից Արժ. Տէր Վարդան քհնյ Ս. Վարդանեանից Ս. Կատ. Օր. Դպրոցի 50-ամեայ յոբելեանի առթիւ Կալկաթայում հանգանակուած գումարն (Բոլորան գիւղի գնման համար) | | | 86100 | |
| Փոխադրելի | | | 101725 | 30 |



## և Ս. Կատարինեան Օրիորդաց Ուսումնարանաց Նոր-Ջուղայի, Յուլիսի 1911 ց'31 Յուլիսի 1912 ամի։

### ԵԼՔ

| | Ղռան | Սենր | Ղռան | Սենր |
|---|---|---|---|---|
| **Ռոճիկներ** | | | | |
| Վճարուած ուսումն. տարւոյս ընթացքում ռոճիկներ ուսուցիչ—ուսուցչուհիներին | | | 45143 | 30 |
| **Ծառայից վարձեր** | | | | |
| Վճարուած ուսումն. տարւոյս ընթացքում վարձք դպրոցաց ծառաներին | | | 4046 | 50 |
| **Ներկայացումներ** | | | | |
| Վճարուած մանկական երեկոյթի ծախսեր | | | 438 | 50 |
| **Բոլորան և Ջիգան գիւղեր** | | | | |
| Վճարուած Բոլորան և Ջիգան դպրոցապատկան գիւղերի ցորենը և գարին Ջուղա փոխադրելու և վարձակալութեան վարձ | 10980 | 45 | | |
| Վճարուած ներկայ տարւոյս վերակացուների ճանապարհածախս և ի հաշիւ վարձու | 515 | | 11495 | 45 |
| **Հոգ. Դպրանոցի հաշիւ** | | | | |
| Վճարուած Հոգևոր դպրանոցին իւրեանց Բոլորան գիւղի $^1/_6$ բաժինն (1 դանգի) | | | 3077 | |
| **Նորոգութիւններ** | | | | |
| Ծախսուած դպրոցաց և կալուածոց անհրաժեշտ նորոգութեանց համար | | | 1967 | 90 |
| **Հեռագրի հաշիւ** | | | | |
| Վճարուած զանազան հեռագրերի ծախս | | | 357 | 90 |
| **Պօստի հաշիւ** | | | | |
| Վճարուած զանազան նամակների ծախս | | | 60 | 80 |
| **Վինակախայի մանր ծախս** | | | | |
| Վճարուած պահարանների և պօստի ծախս | | | 59 | 10 |
| **Մանր ծախսեր** | | | | |
| Վճարուած զանազան մանր իրերի գին աւէլ-չընէքրու, ձիւն սրբելու, ապակիի գներ և այլն | | | 2085 | 65 |
| Փոխադրելի | | | 69032 | 10 |

## ՄՈՒՏՔ

| | Ղուան | Սենթ | Ղուան | Սենթ |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | | | 101725 | 30 |
| **Գէորգ Քանանեան Դպրոց** | | | | |
| Ստացուած Կայս. Բանքից 25 հազար թումանի տոկոսը Դեկտ. 4-ից 1910 թ. մինչև 6 Յունվար 1912 թ. 1 տարի և 33 օրուայ | | | 13416 | 65 |
| **Տոկոսների հաշիւ** | | | | |
| Ստացուած Հանգ. Աւետիք Կրէտեանի կտակած գումարի տոկոսը | 1720 | | | |
| » Հանգ. տ. Սարրա Աղամեանի 1000 ղ. » Տէր Իսահակ ք. Սմբարչեանի 1000 ղռանեաց տոկոսները | 104 | | | |
| » Ս. Գրիգոր Լուս. Եկեղեցուն փոխառաբինաբար տրուած 2000 ղ. տոկոսը | 88 | | 1912 | |
| **Փոխարինաբար տրուած գումարներ** | | | | |
| Յետ Ստացուած Ս. Գ. Լուսաւորիչ Եկեղ. տրուած փոխ. պարտքը | 2200 | | | |
| » » Ալէքսան Յովհաննէսեանի փոխ. տրուած պարտքը | 300 | | | |
| » » Գիւղական-Կրթակ. Խորհրդից փոխ. տրուած պարտքը | 683 | | 3183 | |
| **Գանձանակադրամ** | | | | |
| Ստացուած Նոր-Ջուղայի Ս. Եկեղեցեաց գանձանակներից | | | 137 | 10 |
| **Հանգ. ծիրունի Բալասան Տէր Սարգսեան** | | | | |
| Ստացուած հանգ. Տ. Բ. Տէր Սարգսեանի կտակած այգոյ $^1/_6$ մասի արժէքը պ. Պօղոս Ընձրգուլեանի ձեռամբ | 750 | | | |
| » վաճառուած վառելափայտերի և Ջրի գին | 15 | 75 | 765 | 75 |
| **Հանգ. Գրիգոր Գասպարեանի հաշիւ** | | | | |
| Ստացուած հանգ. Գրիգոր Գասպարեանի կտակած տան վարձը | 160 | | | |
| » այգւոյ վարձը 1911 թուի 50 ղռան 1912 թ.-ի 450 ղ. | 500 | | 660 | |
| Փոխադրելի | | | 121799 | 80 |

## ԵԼՔ

| | Ղուան | Սենթ | Ղուան | Սենթ |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | | | 69032 | 10 |
| **Երաժշտական ճիւղի հաշիւ** | | | | |
| Վճարուած երաժշտական խմբի ղեկավար պ. Միքայէլ Կարապետեանին անցեալ և ներկայ տարուայ Նուէրը | 1000 | | | |
| Վճարուած 1 կորնետի գին | 100 | | | |
| » 1 քլառինէտի գին | 30 | | 1130 | |
| **Մանկապարտէզի ծախս** | | | | |
| Վճարուած զանազան խաղալիքների գին և ճանապարհածախս նոյնպէս և վարձ շինելու և գին զանազան փայտեայ սարի, գլոբի և այլ պարագայից | | | 2358 | 80 |
| **Տպագրութեան հաշիւ** | | | | |
| Վճարուած յայտարարութիւնների, ծրագրի, վկայագրի նայլն նայլն տպագրութեան ծախս թէ այստեղ և թէ Թեհրանում | | | 1328 | 40 |
| **Կահ-կարասեաց հաշիւ** | | | | |
| Վճարուած զանազան կահ-կարասեաց համար (սեղանների, նստարաններ նայլն) | | | 1537 | 45 |
| **Գետնահարկի հաշիւ** | | | | |
| Վճարուած դպրոցացս կալուածոց համար Տէրութեան հարկը | | | 213 | 50 |
| **Տոկոսներ** | | | | |
| Վճարուած Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան մի հազար թումանի տոկոսը $9^0/_0$-ով | 900 | | | |
| Վճարուած Ազգ. հիւանդ. 500 թմնի. $6^0/_0$-ով | 300 | | 1200 | |
| **Դասագրքերի հաշիւ** | | | | |
| Վճարուած անցեալ, ներկայ և առաջիկայ տարուայ համար Հայերէն գրքերի արժէք | 2031 | 10 | | |
| Անգլիերէն » » | 2117 | | | |
| Պարսկերէն » » | 136 | | 4284 | 10 |
| **Վառելիքի հաշիւ** | | | | |
| Վճարուած վառելափայտի գին | | | 1823 | 65 |
| Փոխադրելի | | | 83158 | |

# ՄՈՒՏՔ

| | Ղուռն | Սենթ | Ղուռն | Սենթ |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | | | 121799 | 80 |
| **Վիճակախաղի հաշիւ** | | | | |
| *Ստացուած վիճակախաղի տոմսակների գին* | | | 7886 | 50 |
| **Թօշակադրամ** | | | | |
| *Ստացուած Թօշակադրամ երկսեռ դպրոցայս աշակերտ-աշակերտուհիներից . .* | | | 2400 | 55 |
| **Արհեստագիտական Դպրոցի հաշիւ** | | | | |
| *Ստացուած փոխարինաբար Արհեստագիտական Դպրոցներից . . . . .* | | | 6240 | 15 |
| Գումարն է | | | 138327 | |

# ԵԼՔ

| | Ղուռն | Սենթ | Ղուռն | Սենթ |
|---|---|---|---|---|
| Փոխադրուած | | | 83158 | |
| **Գետնավարձի հաշիւ** | | | | |
| *Վճարուած կուսանաց մենաստանի 6 ամսեայ գետնավարձը . . . . . .* | | | 250 | |
| **Բոլորան գիւղ** | | | | |
| *Վճարուած Բոլորանի 5 դօնգի արժէքի մնացորդը* | | | 41309 | |
| **Ճանապարհածախսի հաշիւ** | | | | |
| *Վճարուած օր. Կ. Յարութիւնեանին և պ. Ալէքսան Յովհաննէսեանին ճանապարհածախս* | | | 1200 | |
| **պ. պ. Եղբարք Թումանեանց հաշիւ** | | | | |
| *Վճարուած պ. պ. Եղբ. Թումանեանց պահանջը* | | | 1700 | |
| **Արհես. Դպրոցի հաշիւ** | | | | |
| *Վճարուած Արհս. ճիւղին Սինկափուրայ պ. պ. Ստեփաննոս Պօղոս Ընկ. նպաստը . .* | | | 418 | |
| **Բոլորան գիւղի եկեղ. շինութեան հաշիւ** | | | | |
| *Վճարուած Բոլորան գիւղի նոր եկեղեցւոյ շինութեան համար բարեկրօն Տէր Յովակիմ քահանայի ձեռամբը . . . .* | | | 470 | |
| **Նուէրի հաշիւ** | | | | |
| *Վճարուած Աւետէս դայի Ռոստամին իբրև նուէր արծաթեայ անօթի գին . .* | | | 110 | |
| **Չիգան գիւղի Տէրութեան հարկի հաշիւ** | | | | |
| *Վճարուած Չիգան գիւղի ներկայ տարւոյս հարկը . . . . . .* | | | 885 | 50 |
| **Պահանջ** | | | | |
| *Վճարուած փոխարինաբար Բոլորան գիւղացւոց տարւոյս հարկի հաշւին .* | 590 | | | |
| *» կանխիկ օր. Կ. Յարութիւնեանին ի հաշիւ ռոճկաց . .* | 600 | | 1190 | |
| Բալանս . . . . . . | | | 7886 | 50 |
| Գումարն է | | | 138327 | |

Ծանօթ. ա. Ուսումնարանները ունէին առ միս Յունուարի 1912 ամի
ի խնամս Ս. Յովհ. Եկեղ. Հայոց Բաթաւիոյ
Կենտրոնականն . . . . Գիլդր 10300—
Ս. Կատ. օր. Դպր. . . . . » 7400—

բ. Ի խնամս Ս. Լուս. Եկեղ. Հայոց Սինկափուրայ Մաուչիր 757—50

գ. Սպահանի Կայսերական Բանքում Գէորգ Քանանեան
Դպրոցի և մանկապարտէզի դրամագլուխը ղրան 250000—
Հանգ. տ. Սարրա Աղանեանի կտակածը . » 1000—
» Տէր Իսահակ Թ. Ամբարչեանի » . » 1000—

դ. Մակասարի Մեծապ. Միքայէլ Ստեփաննոս և Ընկերութեան վաճառատանը հանգ. Աւետիք Ն. Կըրէտեանի կտակած գումարը . . Գիլդր 6507—70

Անվճար թողած Ջուղայի մի քանի Եկեղեցեաց Պատուարժան Երեցփոխներէ կողմից 1910—11 Թ. դպրոցների պահպանութեան համար նպաստ մօտաւորապէս 6000 ղրանիք։

Ծանօթ. Պարտք մնացած Նախկին ժամանակներից Հայուհեաց Բարեգործական Ընկերութեանը (տոկոսով) . ղրան 10000—
Հովսէփ Դպրանոցին . . » 2000—
Հանգ. Յ. Պօղոսխանեանի Ցանձնախմբին (տոկոսով) » 5000—
Ս. Կատ. Օր. Դպր. անձեռնմխելի դրամագլխին (որից 5250 ղրանը Բոլորան գիւղի դպրոցի համար է վճարուել, իսկ մնացորդը Նախկին Հոգաբարձութիւնն էր ծախսել) » 7541—90

24541—90

# Հաշուեկշիռ Ել-և-մտից Ազգային Արհեստագիտական Դպրոցների, 1 Յուլիսի 1911 մինչև 31 Յուլիս 1912 թ.

## ՄՈՒՏՔ

| | Ղռան | Սենթ | Ղռան | Սենթ |
|---|---|---|---|---|
| Պատրաստի գումար անցեալ տարուանից . | | | 6091 | 85 |
| **Կօշկակարանոցի հաշիւ** | | | | |
| Ստացուած Կօշկակարանոցի 13 ամսուայ մուտքն . . . . . . | 14956 | | | |
| **Ջուհլականոցի հաշիւ** | | | | |
| Ստացուած Ջուհլականոցի 13 ամսուայ մուտքն | 7262 | 5 | 22218 | 5 |
| **Տոկոսի հաշիւ** | | | | |
| Ստացուած Կալկաթայի Մեծապատիւ պ. պ. Արզարեանց դրամագլխի տոկոսը ռ. 1222—2—4 Աֆիշինէլ—Տրատից . . . | | | 4347 | 90 |
| **Նպաստից հաշիւ** | | | | |
| Ստացուած Սինգափուրայ Մեծ. պ. պ. Ստեփաննոս և Պօղոս Ընկ. ութն (8) Անգլ. ոսկոյ նպաստը պ. պ. Եսայի Սարգիս Ընկ. միջոցաւ | | | 418 | |
| Գումարն է | | | 33075 | 80 |

## ԵԼՔ

| | Ղռան | Սենթ | Ղռան | Սենթ |
|---|---|---|---|---|
| **Կօշկակարանոցի հաշիւ** | | | | |
| Վճարուած կաշեղէնի և նիւթեղէնների ճանապարհածախս Ահվազից—Սպահան կայս. բանկի միջոցաւ . . . . . . | 763 | 95 | | |
| Նոյնն Սպահանից—Ջուղա փոխադրելու վարձ | 9 | 50 | 773 | 45 |
| **Վարձու հաշիւ** | | | | |
| Վճարուած վարպետի և աշակերտ. վարձերը | | | 5595 | |
| **Կաշեղինեաց եւ նիւթեղինեաց հաշիւ** | | | | |
| Վճարուած կաշեղինեաց և նիւթեղինեաց արժէք գնուած տեղում | 6269 | 75 | | |
| » » » » Լոնդոնից | 7907 | 65 | 14177 | 40 |
| **Գործիքների հաշիւ** | | | | |
| Վճարուած գործիքների գին . . . | | | 292 | 60 |
| **Վառելիքի հաշիւ** | | | | |
| Վճարուած վառելափայտի գին . | | | 58 | 90 |
| **Մանր ծախուց հաշիւ** | | | | |
| Վճարուած թելի, մոմի, կօշկի կապի և այլն | | | 133 | 10 |
| **Ջուհլականոցի հաշիւ** | | | | |
| Վճարուած գերձանի ճանապարհածախս Ահվազից—Սպահան . . . | | | 621 | 80 |
| » վարձ վարպետի և գործաւորներու . | | | 2269 | 95 |
| » գործիքների արժէք . . | | | 70 | 75 |
| » նիւթեղէնի արժէք . . | | | 436 | 70 |
| » մանր ծախսերի համար . . | | | 264 | 45 |
| » վառելիքի գին . . . | | | 78 | 40 |
| » մանած ներկելու վարձ . . | | | 163 | |
| » » ոլորելու » . . | | | 480 | 30 |
| **Պահանջ** | | | | |
| Վճարուած փոխարինաբար Ազգ. երկսեռ Դպր. | 6240 | 15 | | |
| » Ջուհլականոցի համար վարձուելիք վարպետի ճանապարհածախս Նախօրօք ուղարկուած պ. Պօղոս Ընջուրգուլեանին Եազդ, որը մնում է նրա մօտ իբրև աւանդ . . . | 600 | | 6840 | 15 |
| Բալանս . . . . . | | | 819 | 85 |
| Գումարն է | | | 33075 | 80 |

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հոգաբարձութիւն Ազգ. Երկսեռ Դպրոցաց՝

Փոխ. Նախագահ՝ Կարապետ քհնյ Թումիկեան

Գանձապահ՝ Մարտիրոս Մ. Սրգարեան

Անդամներ՝ Դոկտոր Ռանդոլֆ

Թադէոս Ն. Տէր-Գալստանեան

Ա. Սբրահամեան

Յ. Մ. Ղարախանեան

---

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

2002

20163

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0054054